



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

v-27

6 NOV 2011

A  
H-123

391.99  
U-27  
այ.

II 28  
50

433

Երևանի Հ. Բալասանյան

# ՎԵՐԱԾՆՈՒԱԾԸ

(Դրամն 3 գործողություններ)

Լ Ե Ռ Ո Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն Ի

Առաջին ներկայացման համար \*)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Աննա, հասակն առած կին . . . . .	օր.	Աւարիան
Տիգրան	} նրա որդիքը . . . . .	պ. Ն. Յովհաննիսեան
Սամսոն		պ. Մ. Մանուէլեան
Հրանտյշ	} նրա աղջկերքը . . . . .	տ. Սիրանոյշ
Վարդուշ		տ. Օհաննիսեան
Զարօ, միջնորդ . . . . .	պ.	Կիրակոսեան
Արամեան, դերասան . . . . .	պ.	Յ. Սևուժեան
Ալեքսան, ծառայ . . . . .	պ.	Մանուէլեան

Անցքը ժամանակակից է և տեղի է ունենում Կովկասի մեծ քաղաքներից մէկում:



\*) 1906 թ. Յունուարի 7-ին, Ալեքսանդրապոլի Ժողովրդական անկախ շինութեան մէջ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Մի հիւրասենեակ, որի կան-կարասին փափուկ է և կահաւորութիւնն առ-հասարակ շքեղ, մինչև իսկ փարթամ, բայց հնամաշ, — ապացոյց, որ մենք գտնուում ենք նախկին հարստի տան մէջ: Աջակողմեան և ձախակողմեան դռները տանում են դէպի բնակարանի ներքը, իսկ ձախատի դուռը զլիսա-ւոր մուտքն է:

Ժամանակը — առաւօտ:

Հրանոյշը նստած է բազմոցի վրայ և գիրք է կարդում: Քիչ յետոյ մտնում է Արամեանը, որը շտապում է օրիորդին բարեկրու:

Տ Ե Ս Ի Լ 1.

Հրանոյշ, Արամեան.

ԱՐԱՄԵԱՆ. Օրիորդ Հրանոյշ, յարգանքս:

ՀՐԱՆՈՅՇ. Բարև ձեզ, պարոն Արամեան:

ԱՐԱՄԵԱՆ. Ես ձեզ խանդարեցի:

ՀՐ. Ո՛չ, նստեցէք խնդրեմ:

ԱՐ. Ի՞նչ էիք կարդում: Երևի, վէպ է:

ՀՐ. Ո՛չ, «Օբլէասի կոյսը»:

ԱՐ. Ա՛, լաւ բան է: Բայց մի՞թէ դեռ նոր էք կարդում:

ՀՐ. Ո՛չ, բայց ես շատ եմ հաւանում այս գիրքը: Կար-դում եմ, չեմ կշտանում: Մի քանի տեղեր մինչև անգամ ան-գիր եմ արել:

ԱՐ. Ձլինի՞, օրիորդ դուք մտադիր էք կատարել այդ գերը:

ՀՐ. Ներեցէք, ես այդպիսի յանդգնութիւն չունիմ:

ԱՐ. (Ծիծաղում է) Իհարկէ, իհարկէ, ես կատակ եմ անում: Հնա, այժմ մեր գործից խօսենք: Հիմա դուք կը մտածէք. սրա կամ աղն է պակաս, կամ մաղը, որ էլի...

ՀՐ. Երևի դարձեալ ներկայացում:

ԱՐ. Այո՛, օրիորդ Հրանոյշ, դարձեալ ներկայացում: Եւ ես եկել եմ ձեզ մօտ յատկապէս նրա համար, որ խնդրեմ ձեր բարեհաճ մասնակցութիւնը:

ՀՐ. Ի՞նչ պիէս էք ընտրել:

ԱՐ. Մի նոր պիես է, և դուք մի շատ լաւ դեր ունիք: Ես վստահ եմ, որ դուք կ'արդարացնէք մեր յոյսը: Եստ ազ-

դու և շնորհապարտ դեր է և ձեզ միջոց կը տայ այս անգամ ձեր բոլոր բեմական ձիրքը փայլեցնել բեմի վրայ:

ՀՐ. Իսկ եթէ իմ ոյժից վեր լինի այդ գերը...

ԱՐ. Ամենևին ո՛չ: Ձեռք չափած է ձեզ համար: Կարծես հեղինակը ձեզ է ունեցել աչքի առաջ այդ գերը գրելիս:

ՀՐ. Եթէ պատասխանատու դեր է, ես վախենում եմ փը-չացնեմ:

ԱՐ. Համեստութիւնը մի կողմ, օրիորդ: Ես կարող եմ ե-րաշխաւորել, որ դուք շատ լաւ կը տանէք այդ գերը:

ՀՐ. Բայց ես դեռ այնքան անփորձ եմ: Հազիւ մի քանի անգամ բեմ ելնել, իբրև սիրողուհի, և յանկարծ ստանձնել մի այդքան պատասխանատու դեր. այն էլ նոր պիեսի մէջ, դա, ինձ թւում է, մինչև անգամ յանդգնութիւն իմ կողմից:

ԱՐ. Օրիորդ, իբաւ է, կան այնպիսի անշնորհքներ, որոնց բեմ դուրս դալը առհասարակ յանդգնութիւն է. բայց ում տը-րուած է ընդունակութիւն, արդէն յանցանք է թագցնել իր քանքարը, նման ժլատին, որ իր գանձը թաղում է հողի տակ: Երբ դուք առաջին անգամ բեմ դուրս եկաք և այն ոչ փայլուն գերի մէջ, դուք միանգամից գրաւեցիք հասարակութեան հա-մակըութիւնը: Ձեր մտածուած խաղը, ձեր մաքուր ձայնը, ձեր չափաւոր շարժուածքները — այնքան դուր եկան հանդիսական-ներին, որ ձեզ հինգ-վեց անգամ ոգևորուած դուրս կանչեցին: Դա մի պատիւ է, որին արժանացնում են միայն ճանաչուած և տաղանդաւոր արտիստներին: Պարզ է, ուրեմն, որ դուք ու-նիք անուբանալի ձիրք կամ գուցէ և տաղանդ:

ՀՐ. (Շոյուած եւ ուրախ) Օ՛, մինչև անգամ տաղանդ...

ԱՐ. Այո՛, այո՛, մինչև անգամ տաղանդ... Տաղանդը, կար-ծում էք, պողաւոր է լինում: Այո՛, դուք ունիք տաղանդի բոլոր նշանները, որ միայն փորձառութեան է կարօտ, որպէսզի զար-գանայ: Եւ սա միայն իմ կարծիքը չէ: Մի՞թէ լրագիրները հա-մարեա նոյն կարծիքը չյայտնեցին ձեր մասին:

ՀՐ. Գիտէք, պարոն Արամեան, ես, իհարկէ, ուրախու-թեամբ կը վերցնէի ձեր առաջարկած գերը... Դա ինձ համար էլ մեծ բաւականութիւն է... Ես ձեզ, կարծեմ, առաջ էլ ասել եմ, որ ես թատրոնի սիրահար եմ, որ թատրոնից աւելի բար-ձրը զուարճութիւն չկայ ինձ համար, բայց...

ԱՐ. Բայց ի՞նչ:

ՀՐ. Մեծ հարց է — ի՞նչպէս կը վերաբերուեն իմ տանեցիք:

ԱՐ. Մի՞թէ նրանք կարող են հակառակուել:

ՀՐ. Ես կարծում եմ: Անցեալ անգամ ի՞նչ գժուարու-թեամբ կարողացայ համոզել մօրս, իսկ մեծ եղբայրս ուղղակի

2294  
41



դէմ էր. ես դուրս եկայ բեմ նրա կամքի հակառակ, և դրանից յետոյ նա մի ամբողջ շաբաթ էլ ինձ հետ չէր խօսում:

ԱՐ. Չարմանալի է, ճշմարիտ: Որ ձեր մայրը ձեզ այդ արգելում է, այդ դեռ հասկանալի է. ինքը պառաւ կին, հին հասկացողութիւնների տէր, նախապաշարուած, ասէկօսէներից վախեցող... Իսկ ձեր եղբայրները... Նրանք հօ երիտասարդ մարդիկ են, իրանք էլ երբեմն յաճախում են թատրոն. քիչ թէ շատ, երեւի, հասկանում են թատրոնի նշանակութիւնը, նրանք ինչու պէտք է դէմ լինեն, ասացէք խնդրեմ, ես այդ չեմ հասկանում...

ՀՐ. Գիտէք, դերասանի և դերասանուհու անունը առհասարակ կոտրուած է մեղանում...

ԱՐ. Այո, ճշմարիտ է, բայց...

ՀՐ. Դրանք չեն կարող հաշտուել այն մտքի հետ, որ կարելի է լինել դերասան, կամ դերասանուհի և մնալ միևնոյն ժամանակ ազնիւ և պատուաւոր:

ԱՐ. Ինչպէս էլ լինի, օրիորդ, դուք պէտք է վերցնէք այս դերը: Շատ և շատ խնդրում եմ: Դուք կարող էք ձերոնց հեշտութեամբ համոզել: Իժուարը առաջին անգամն էր...

ՀՐ. Կ'ուզէք, ես կանչեմ ձօրս, և դուք նրան համոզեցէք:

ԱՐ. Ուրախութեամբ: Խնդրեմ:

ՀՐ. Ես—խոկոյն: (Գնում է.)

Տ Ե Ս Ի Լ 2.

Արամեան (մօնակ):

Չարմանալի է մեր բանը: Ինքը հասունացած աղջիկ, ընդունակ, թատրոնի սիրահար, կարող էր այնքան օգտուէտ լինել մայրենի բեմին, և պէտք է հպատակուի մի տղէտ պառաւի և մի տխմար եղբօր քմահաճոյքին... Որքան անմեղ ցանկութիւն և ինչպիսի խոչնդոտներ... Այսքան էլ ճնշել մարդու անհատականութիւնը... Չարմանալի է:

(Մտնում են Աննա եւ Հրանոյշ)

Տ Ե Ս Ի Լ 3.

Աննա, Հրանոյշ, Արամեան.

ԱՐ. Բարե ձեզ, տիկին:

ԱՆ. Բարով էք եկել: Համեցէք:

ԱՐ. Տիկին, ես մի բան եմ խնդրելու, բայց չմերժէք: Շուտով մենք մի ներկայացում պիտի տանք: Մի լաւ դեր կայ, որ կամենում ենք առաջարկել օրիորդ Հրանոյշին:

ԱՆ. Որդի, ի՞նչ էք տեսել Հրանոյշից... Նա հօ դերասանուհի չէ:

ԱՐ. Սիրողների ներկայացում է, տիկին: Դրա համար էլ մենք դիմում ենք օրիորդին, իբրև լաւ սիրողուհու:

ԱՆ. Է՛հ, չէ, յարմարութիւն չկայ...

ԱՐ. Ի՞նչ էք ասում, տիկին: Ինչ անյարմար բան կայ այստեղ: Օրիորդն ունի լաւ բեմական ձիրք, հիմնալի խաղում է, ամենքն հաւանում են... Եւ դուք նրան արգելում էք:

ԱՆ. Ախր ի՞նչ կարող է սովորել աղջիկս էդ ձեր թատրոնումը: Ես ինչ թոյլ տամ աղջկաս էնքան բազմութեան առաջ դուրս գայ բեմ, ծամուռի, սրա նրա հետ սրիլ-բիլի անի... Մի անգամ որդիքս ինձ թատրոն տարան: Մի բան տեսայ—աժօթից միսս թափուեց: Մի աղջիկ դուրս եկաւ, առանց ամաչելու եկաւ, տղամարդու վզովը փաթաթուեց ու...

ԱՐ. Տիկին, այդ ձևացումն են միայն, իսկապէս հօ չեն սիրում իրար: Կարող է պատահել, որ բեմի վրայ միմիանց այդպէս փայփայող դերասանն ու դերասանուհին, բեմի ետև իրար հետ չեն խօսում անգամ, իրար ատելով ատում են...

ԱՆ. Միևնոյն է:

ԱՐ. Տիկին, ձեր երկիւղը միանգամայն անտեղի է: Մենք հօ չենք առաջարկում օրիորդին դերասանական խումբը մտնել, դերասանների հետ մշտական ներկայացումներ տալ: Սա մի սովորական ներկայացում է, որին մասնակցում են շատ պատուական աներից կանայք և օրիորդներ: Այս նախ և առաջ: Յետոյ, բացի այդ, դերի մէջ էլ ոչ մի սիրային արկած չկայ. եթէ փաթաթուում և համբուրում է,— միայն իր ընկերուհու հետ: Ուրեմն...

ԱՆ. Գիտէք, ինչ կայ: Եթէ ես թողնեմ էլ, միևնոյն է, ախպէրբը չեն համաձայնի: Նրանք չեն սիրում այդ տեսակ բաներ:

ԱՐ. Այդ դէպքում ես կ'ուզէի խօսել նրանց հետ:

ԱՆ. Հիմի ոչ Տիգրանն է տանը, ոչ Սամսոնը:

ԱՐ. Այդ ոչինչ: Ես կը գամ երեկոյեան կամ, եթէ չկաքողացայ, վաղը: Կարելի է:

ԱՆ. Ինչու չէ:

ԱՐ. (Ա. եր կենարով) Ուրեմն ց'տեսութիւն:

ԱՆ. Գնաք բարով:

ԱՐ. (Որ. Հրանոյշին) Օրիորդ, դուք էլ հողը պատրաստեցէք:

ՀՐ. Դժբախտաբար, ինձանից ոչինչ չէ կախուած:  
 ԱՐ. Ես յոյսս չեմ կորցնում: Յ'տեսութիւն: (Գնում է):  
 ՀՐ. (Խէթ նայելով մօրը) Դուք միշտ այդպէս էք: (Գնում է):  
 ԱՆ. Էդպէս որ աչքերդ չուեցիր վրաս, ես էլ բեղանից վախեցայ, չէ: Իմ դարդը—բո դարդը: (Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 4.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Մայրիկ, Չաքօն չի եկել:  
 ԱՆ. Ո՛չ, չի եկել: Տիգրան, ո՞ւմ տեսար դրանը:  
 ՏԻԳ. Ոչ ոքի: Ո՞վ էր այստեղ:  
 ԱՆ. Արամեանը:  
 ՏԻԳ. Դերասանը: Ինչի համար էր եկել:  
 ԱՆ. Էլ ինչի համար կը գար:  
 ՏԻԳ. Չլինի էլը դեր էին բերել:  
 ԱՆ. Բաս ինչ: Ներկայացում ունին, ուզում են Հրանտյան դեր տան...  
 ՏԻԳ. Ա՛հ, ես դրանց... Մայրիկ, տես, մի բան է ասում եմ, դրանք վերջի վերջոյ Հրանտյան խելքից հանելու են: Վա, սա ինչ բան է, ցած կտօւր են գտել... Կարծես էլ ուրիշ աղջկերք չկան, հէնց մենակ Հրանտյան է... Չանձրացրին, վերջապէս...

ԱՆ. Ես տեղեակ չեի: Հրանտյան եկաւ թէ, մայրիկ, բեղ մարդ է կանչում: Ես էլ միամիտ եկայ էստեղ, տեսնեմ—մեր անբեղ անմօրուք պարոն դերասանը առաջիս կանգնեց:

ՏԻԳ. Յետոյ... Դու իհարկէ, մերժեցիր նրան:

ԱՆ. Ես չեի համաձայնում: Բայց էնքան խնդրեց, էնքան աղաչեց, որ դրուստն ասած, երեսս չկտրեց, որ չէ ասէի: Ես պատասխան տուի, որ Տիգրանը գիտէ, նրա բանն է, կը գայ—կ'ասեմ. կ'ընդունի, լաւ, չի ընդունի, ինքը գիտէ:

ՏԻԳ. Է՛հ, ես զարմանում եմ բեղ վրայ: Էլ Տիգրանն ինչացո՞ւ էք: Հարկաւոր էր կտրակի մերժել, որ էլ չհամարձակուի մեզ ձանձրացնել... Էլ ինչ դարդ... Մեր հոգսը հէնց դրանց ներկայացումն է... Չեմ իմանում, ինչպէս անենք, որ շուտ տեղ անենք խեղճ աղջկան... հասակն անց է կենում, գնայ իր համար տուն ու տեղ սարքի... Մենք էլ մի քիչ թեթևանանք մը—տաժմունքից... Սրանք եկել են դեռ նոր նոր բաներ են սարքում... Ի՛նչ գիտես, որ հէնց դրա համար չէ, որ էսքան ժամանակ ուզող չեղաւ ու տանը մնաց... Հազիւ մեզ մի քիչ մո-

ուացել էին: Հիմա եկ ու նորից բամբասանքի տակ զցիր խեղճ աղջկան...

ԱՆ. Էլ ասում ես, որդիս: Դրա դարդը Չանս ասել է: Ախր մինչև Երբ պիտի մնայ տանը: Ա՛խ, մի տեղ անենք նրան, հէնց կ'իմանամ—սրտիս ծանր քարը վեր ընկաւ:

ՏԻԳ. Չեմ հասկանում, թէ Չաքօն ինչու ուշացաւ, մի լուր չբերաւ... Տեսնենք, հաւանք է. Հրանտյան, չի հաւանել:

ԱՆ. Ի՞նչ կ'ասի, որ չի հաւանի: Ի՞նչ պակաս աղջիկ է Հրանտյանը: Հա, մատս խուփ, մի քիչ համարձակ է: Բայց հիմիկուայ ժամանակում ո՞ր աղջիկը չի համարձակ:

ՏԻԳ. (Որ առանց մօրը լսելու մտախոն անց ու դարձ է անում): Մայրիկ համբերութիւնս չի տալիս սպասեմ: Ես գնում եմ Չաքօի մօտ:

ԱՆ. Ինչ կայ, որ... Գնա մի բան իմացիր, որ մենք էլ միամտուկներ:

ՏԻԳ. Այո, գնամ, գնամ: (Կամենում է գնալ):

ԱՆ. (Մի բան յիշելով) Հա, կանց, Տիգրան: Բան եմ ասում: Չեռքիդ փող կայ:

ՏԻԳ. Շատ է հարկաւոր: Ինչի համար ես ուզում:

ԱՆ. Աղջկերքը նոր շորեր պիտի կարել տան:

ՏԻԳ. Ն՞որ շորեր... Վա, մի ամիս էլ չկայ, որ երկուսին էլ ոտից մինչև գլուխ նորոգեցինք: Հիմա դարձեալ նո՞ր շորեր... Ուզում են դիւժինը լրացնեն, թէ մօզան է փոխուել...

ԱՆ. Որդիս, վերջին կարածը հասարակ բան էր:

ՏԻԳ. Հիմա շքեղն են կամենում, ուզում շիկ անել, հա... Կա, էլ ի՛նչ դարդ: Դրանք շիկ անեն, մեր Չանը դուրս գայ:

ԱՆ. Ինչ արած, օտարներ չեն, ձեր քոյրերն են: Նրանք վատ հագնուեն, ամօթը մենակ նրանցը չէ, իմն էլ է ու ձերն էլ է:

ՏԻԳ. Մայրիկ, ես ոչինչ չունիմ դրա դէմ: Թո՛ղ լաւ հագնուեն, թո՛ղ մախմուր ու ապրեշումի մէջ Քրֆոան... Բայց դրան էլ հասցնող է պէտք թէ ոչ: Փառք Աստծու. մեր հայրը հազարներ չի թողել բանկումը: Չեզ էլ յայտնի է, որ այս տանը ընդամենը երկու աշխատող ձեռք կայ միայն—ես եմ ու Սամսոնը:

ԱՆ. Էլ ձարներս ինչ, որդիս: Ընկել էք—պիտի տանէք: Էսօր էգուց է դրանցը: Աստծով, երկուսին էլ տեղ կ'անենք, դրանց հոգսիցը կ'ազատուենք ու նրանից յետ՝ Աստուած ողորմած է:

ՏԻԳ. Ուզիդ ես ասում, մայրիկ: Հէնց այդ յոյսն է, որ ինձ պահում է: Թէ չէ—այստեղ է հասել է, մայրիկ:

ԱՆ. Թէ փողի մասին է խօսքդ, որդիս, մի տա: Քեզ չեմ գօտում... Քո բարի կամքն է:

ՏԻԳ. Է՛հ, քո բարի կամքը... Կարծես, իմ խօսքը հիմիկուայ մասին է: Ա՛ն ինչքան գրպանուժս կայ: Տուել եմ ու կը տամ էլ ու ջանս էլ դուրս կը գայ: Իմ դարդը իմ ապագայի մասին է:

ԱՆ. Դարդ մի անի, որդիս: Ապագագ լաւ կը լինի:

ՏԻԳ. Մօտս հիմա քսան մանէթ կայ: Իհարկէ, դա բաւականութիւն չի անելու, յետոյ էլի կը տամ: Ես գիտեմ, որ մի այդքան էլ և զեռ աւելի գնալու է կարել տալուն, զանազան հաշիւաների, արդ ու զարդի... Դրանց շորը ինձ նստելու է պակասը մի ութսուն բուրլի փող: Աստուած վերջը բարի անի:

(Գնում է: Մտնում է Վարդուշը):

Տ Ե Ս Ի Լ 5

Աննա, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, տուեց փողը:

ԱՆ. Տուեց, տուեց:

ՎԱՐԴ. Ի՞նչքան է:

ԱՆ. Քսան մանէթ:

ՎԱՐԴ. Քսան մանէթ... Ֆի. գնա ու քսան մանէթով բան առ:

ԱՆ. Բաս ինչքան էիր ուզում: Արշինը տասը մանէթանոց կտօր պիտի առնէք:

ՎԱՐԴ. Օ՛հ, ինչ ժլատն է մեր Տիգրանը... դողում է փողի վրայ, դողում է... Մամսոնը էլի լաւ է...

ԱՆ. Աղջի՛, ախպերքդ խազնի վրայ են նստած, որ էդպէս մեծ մեծ խօսում ես: Դու մի հաշիւել ես, թէ տարեկան ինչքան փող է գնում հէնց մենակ ձեր երկուսիդ շորերի վրայ:

ՎԱՐԴ. Մեծ բան է մի քանի հարիւր մանէթը:

ԱՆ. Էդ փողը ախպերքդ էսպէս են դատում, է՛: (Յոյց է տալիս, որ քրոխը է սրբում): Քեզ համար էդ թշինչ:

ՎԱՐԴ. Էլ ի՞նչ եղբայրներ են, եթէ իրանց քոյրերի համար պիտի խնայեն...

ԱՆ. Վայ քու խելքին, Վարդուշ... Սկի բան չես հասկանում... Ոնց որ մի սիւսիս երեխայ:

ՎԱՐԴ. Շատ լաւ էլ հասկանում եմ:

ԱՆ. Դու կարծում ես, ախպերքդ պարտական են, հա՛, որ մինչև վերջը ձեր հոգսը քաշեն:

ՎԱՐԴ. Իհարկէ, պարտական են:

ԱՆ. Դու որ յիմար չլինես, էդ խօսքը կ'ասես:

ՎԱՐԴ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, բաւական է: Չեմ իմանում ինչ է պատահել քեզ: Մի քանի մանէթ փող էք տալիս, մեր քթածակերիցը բիչ է մտում հանէք: Չէք կամենում, մի տուէք: Խնդրող չկայ:

ԱՆ. Ա՛ն, սո՛ւ: Խելքիդ աղ անեմ:

ՎԱՐԴ. Սա հերիք չէ: Շատ կը պակսի:

ԱՆ. Էլի է տալու, աղջի: Դեռ դնացէք առաջ կտորներն առէք... Ա՛յ, ես Հրանոյշին էլ կ'ասեմ, միասին գնացէք: (Մօտենալով դրանք): Հրանոյշ, էստեղ արի:

(Մտնում է Հրանոյշը):

Տ Ե Ս Ի Լ 6

Աննա, Հրանոյշ Վարդանուշ:

ԱՆ. Տիգրանը փող տուեց, որ ձեզ համար շորել կարել տար: Պատրաստուեցէք, որ գնար:

ՀՐ. Ես չեմ գնալու: Թող Վարդուշը մենակ գնայ:

ԱՆ. Ինչո՛ւ:

ՀՐ. Այնպէս: Չեմ կամենում:

ՎԱՐԴ. (Նաղբելով) Չեմ կամենում:

ՀՐ. (Խէթ նայում է քրօջը):

ԱՆ. Դէ՛հ արի ու հաւատան: Աղջկայ ձեռը փող տաս, որ գնա իր համար լաւ շորեր առնի. նա կանգնի, թէ «չեմ կամենում»:

ՎԱՐԴ. Ինձանից էլ շատ է ուզում:

ՀՐ. Ուրիշներին քո արշինով մի չափիր:

ՎԱՐԴ. Քեզ հետ խօսող չկայ:

ԱՆ. Շատ հարկաւոր է, թէ չես առնի: Կարծում է աղանք պիտի անենք:

ՀՐ. Ես այդպիսի բան չեմ կարծում: (Կամենում է հեռանալ):

ԱՆ. (Պահում է նրան) Աղջի, ինչո՛ւ ես էդպէս ծուռել: Ի՞նչ է պատահել, որ երէկուանից դէսը սևարտուել ես էնքան, որ հետք խօսել չի լինում:

ՀՐ. Ինձանից էլ լաւ գիտես, թէ ինչ է պատահել:

ԱՆ. Մի լաւ տեղից քեզ ուղող կար, ես էլ տարայ քեզ ցոյց տուի: Սա ի՞նչ մի վատ բան է, որ գլխիս կրակ ես թափում:

ՀՐ. Երեւի, վատ բան է, որ ինձ գայրացնում է:

Ան. Լաւ, ի՞նչդ պակօսեց: Չառդ վեր եկաւ:  
 ՀՐ. Չառս վեր չեկաւ, բայց ես գետինը մտայ ամօթից  
 այնքան հիւրերի առաջ:  
 Ան. Ի՞նչ ամաչելու բան կար, որ...  
 ՀՐ. Դուք ինձ հաւատացնում էք, թէ բարեկամի մօտ հիւր  
 ենք գնում, այն ինչ խաբելով տանում էք ինձ և, ինչպէս ապ-  
 բանք, ինչպէս մի ծախու ձի, ցոյց էք տալիս, այն էլ ո՞ւմ—  
 մի տգէտ և ապուշ մարդու:  
 Ան. Չէ՛նդ: Ապուշը հէնց դու ես, որ էն պատուական  
 մարդուն չես հաւանում:  
 ՀՐ. Պատուական մարդ... Հն-հն-հն... էլ պակասութիւն  
 չունի... Ո՛սկի է, ո՛սկի...  
 Ան. Բաս ի՞նչ: Բեզ լայեզ չէ:  
 ՎԱՐԴ. Ես զարմանում եմ... Ի՞նչ պակաս մարդ է որ...  
 ՀՐ. Այո՛: Այքան հաւանում ես... Ուրեմն ինքդ առ: Ես  
 քեզ նրան ուրախութեամբ զիջանում եմ:  
 ՎԱՐԴ. Նա քեզ է ուզում, ոչ թէ ինձ:  
 Ան. Աւելի լաւ կ'անես, փառք տաս Աստծուն, որ վեր-  
 չապէս բախտդ բաց արեց, ոչ թէ...  
 ՀՐ. Ի՞մ բախտը... (Ծիծաղելով հեռանում է:)  
 ՎԱՐԴ. Մայրիկ, Չաքօն, Չաքօն եկաւ: (Գնում է: Մտնու  
 է Չաքօն:)

Տ Ե Ս Ի Լ 7.

Աննա, Չաքօ.

ՉԱՔՕ. Բարով, քեռակին:  
 Ան. Բարով եկար, Չաքօ: Տիգրանին չտեսար:  
 ՉԱՔՕ. Չեմ տեսել:  
 Ան. Նա քեզ մօտ գնաց:  
 ՉԱՔՕ. Ես փեսացուի մօտիցն եմ գալիս:  
 Ան. Փեսացուի՞... Հը՛, ի՞նչ բարի համբաւ:  
 ՉԱՔՕ. Բարի համբաւ որ չլինի, Չաքօն ի՞նչ է շինում  
 էստեղ:  
 Ան. Նստի՛ր, Չաքօ, համեցէք, բեղարած կը լինես:  
 ՉԱՔՕ. (Նստում է) Էս ձերութիւնն էլ մի բան չի եղել,  
 քեռակին: Մարդ շատ շուտ դաղրում է:  
 Ան. Ես էլ հէնց քս օրին եմ, Չաքօ:  
 ՉԱՔՕ. Է՛հ, յետոյ, քեռակին, մի ասա՛ տեսնեմ, ինչ էք  
 խոստանում ինձ, եթէ էս բանը դրստեմ:

Ան. Թող մի գլուխ գայ բանը, Չաքօ, ազիդ որդոցս արեւ  
 գիտենայ, քեզ էնպէս լիացնենք, որ...  
 ՉԱՔՕ. Ինչ մտում է բանը գլուխ գալուն, քեռակին, բա-  
 նը գլուխ եկած վերջացած համարեր:  
 Ան. Աղջկան հաւանել է:  
 ՉԱՔՕ. Հաւանել է, թէ խօսք է: Նրա խելքը, նրա վա-  
 ըուեցողութիւնը, նրա ճարտար խօսելը, ճշմարիտ եմ ասում,  
 քեռակին, փեսացուին հիացրել են: Գիտե՛ս ինչ էր ասում:  
 «Իմ բոլոր կարողութիւնն, ասում էր, էդ աղջկան հալալ է»:  
 Ան. Հէնց է՞դպէս էլ ասաց:  
 ՉԱՔՕ. Իսկ և իսկ նրա խօսքերն եմ կրկնում:  
 Ան. Փառք Ստեղծողին: Աստուած քեզ բարի տայ, Չաքօ,  
 որդոցդ առաջը բերի:  
 ՉԱՔՕ. Չէ, աղջկադ բախտը լաւ բանեց:  
 Ան. Շնորհակալ եմ: Էս քո հունարն է, Չաքօ:  
 ՉԱՔՕ. Ինձ Չաքօ կ'ասեն: Իմ ձեռքով կարգուածը բախ-  
 տաւոր կը լինի: Մաղ քաղաքն էլ գիտէ, որ Չաքօի ոտը թեթեւ է:  
 Ան. Ես միայն մի բանից եմ վախենում:  
 ՉԱՔՕ. Ի՞նչ բանից:  
 Ան. Չաքօ, յանկարծ չվերկենայ փեսացուն ու փողի ա-  
 նուն տայ:  
 ՉԱՔՕ. Մտքովդ էլ չանց կացնես:  
 Ան. Ասենք, աղջկայ վրայ լաւ բաժինք կը տանք...  
 ՉԱՔՕ. Էդ էլ ձեր դիտնալու բանն է: Բաժինք կը տաք,  
 ձեր աղջկան կը տաք, չէք տայ, փեսացուն այնումն էլ չի գցի-  
 էդ կողմից միամիտ կացէք: Նա ձեզանից ուրիշ ակնկալութիւն  
 չունի: Լաւն էն է վճռենք, թէ ե՞րբ, ո՞ր օրը փեսացուն գայ  
 նշանը բերի:  
 Ան. Որդիքս էլ տանը չեն, առաջ մի խորհուրդ անենք,  
 յետոյ:  
 ՉԱՔՕ. Վնաս չունի, խորհուրդ արէք: Միայն մի բան եմ  
 խնդրում, քեռակին, ինչ որ վճռելու լինէք, ինձ շուտ իմաց ա-  
 րէք, որ ես էլ փեսացուին յայտնեմ:  
 Ան. Չենք ուշացնի, Չաքօ: Էսօր և եթէ:  
 ՉԱՔՕ. Շատ բարի: Հիմա ես գնամ: Ծառայութիւն:  
 Ան. Գնաս բարով: Խէրով լինի ոտդ:  
 (Չաքօն գնում է: Մտնում է Վարդուշը դրսի զգեստով:)

Տ Ե Ս Ի Լ 8.

Աննա, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, ես գնացի:

ԱՆ. Բաս Հրանոյշը:

ՎԱՐԴ. Նա չի գալիս:

ԱՆ. Գլխի վրայ կը գայ: Ձի գալիս: Հրանոյշ:

Հրանոյշի ծայնը. (միւս սենեակից): Հրանոյշին հանդիստ թողէք:

ՎԱՐԴ. Տեսնո՞ւք: Դու նրան նոր ես ճանաչում: Նա իր թը- քածը չի լիզի: Ասաց «չեմ գալու»—վերջացաւ:

ԱՆ. Ձի գալիս, թող չգայ: Դու էլ գնա քեզ համար մի էն տեսակ հիանալի կոտոր առ, որ տեսնի—աչքը դուս գայ:

ՎԱՐԴ. Իհարկէ, հէնց այդպէս էլ պիտի աճեմ:

(Գնում է: Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 9.

Տիգրան, Աննա:

ԱՆ. Ձուր տեղը գնացիր, Տիգրան: Չաքօն քիչ առաջ էս- տեղ էր:

ՏԻԳ. Հը, ի՞նչ էր ասում:

ԱՆ. Փեսացուն, ասում է, շատ հաւանել է Հրանոյշին, խելքը գնացել է:

ՏԻԳ. Նշանը երբ է տալիս:

ԱՆ. Էդ մենք պիտի վճռենք:

ՏԻԳ. Ես կարծում եմ, հէնց այսօր կամ վաղն և եթ կա- րելի էր: Քանի շուտ, այնքան լաւ:

ԱՆ. Բաս փեսացուի մասին հաստատ տեղեկութիւններ չհաւաքե՞նք, յետոյ:

ՏԻԳ. Ի՞նչ տեղեկութիւններ ես ուզում:

ԱՆ. Ով գիտէ, է, հազար ու մի բաներ են ասում:

ՏԻԳ. Օրինակ:

ԱՆ. Լսեցի, որ իբր թէ պարտքեր շատ ունի:

ՏԻԳ. Բայց որ պարտքերի դիմաց հարիւր հազարի կայ- քեր ունի, այդ չէ՞ս լսել:

ԱՆ. Յետոյ, իբր թէ մի ժամանակ կոտոր է ընկել ու քանաւորը նստել...

ՏԻԳ. Բան ասաց... Հիմա բանտումը չէ. Փառք Աստու- ԱՆ. Մէկ էլ թէ մարուր ճանապարհով չի հարստացել ու շատ խեղճերի է զրկել...

ՏԻԳ. Դէ հերիք է դա, մայրիկ: Այնպէս խամ խամ խո- սում է, կարծես աշխարհից բխարար լինի: Իբր թէ քո որ- դիքը շատ մարուր ճանապարհով են մի երկու շահի ձեռքները գցել: Բաս ինչ է: Մեռնեմ ես դրանց մարուր ջանին... Չորս կողմը խաբէութիւն է, մայրիկ. ի՞նչ ես ասում:

ԱՆ. Ինչպէս կ'ուզես, որդիս: Ուզում ես, հէնց վաղն և եթ ասենք նշանը բերի:

ՏԻԳ. Իհարկէ, էլ ի՞նչի համար ենք յետաձգում:

ԱՆ. Բոլորը ետա կը գնայ, Հրանոյշն է մի քիչ չեմ ու չում անում:

ՏԻԳ. Չեմ ու չում անում: Ապա թող մի համարձակուի...

Հազիւ է բախտը բերել...

ԱՆ. Կանչեմ գայ:

ՏԻԳ. Թող գայ, տեսնենք: (Աննան գնում է):

Տ Ե Ս Ի Լ 10.

Տիգրան (Մեռակ).

Չէ, պէտք է վերջացնել: Նրա խելքովն եմ ընկնելու, ի՞նչ է: Նա ի՞նչ իրաւունք, ինչ ձայն ունի այս տանը: Չեմ-չում է անում: Ապա թող համարձակուի մի ինձ մօտ էլ չեմ-չում անել...

(Մտնում է Աննան, նրա ետեւից Հրանոյշը լուրջ եւ դժգոհ):

Տ Ե Ս Ի Լ 11.

Տիգրան, Աննա, Հրանոյշ.

ԱՆ. Արի էստեղ, մեզ մօտ նստիր-

ՀՐ. (Կարծես տկամայ եւ դանդաղ առաջ է դալիս եւ նստում նը- րանցից քիչ հեռու):

ԱՆ. Գիտես ի՞նչ կայ, Հրանոյշ: Երեկուայ տեսածդ մար- դը, բանից երևում է, քեզ շատ հաւանել է. էսօր էլ մարդ է զրկել մեզ մօտ ու քեզ ուզում է:

ՀՐ. Ուզում է, դուք էլ տուէք:

ԱՆ. Հէնց էդպէս էլ վճռել ենք:

ՀՐ. Այո՞, արդէ՞ն: Ի՞նչ շուտ:

ԱՆ. Տես, Հրանոյշ, էլ չեմ-չում չանես, հա, թէ չէ, Աս-



ստուած է վկայ, էստեղ է հասել, բանդ վատ կը լինի: Մեր փեսացուն...

ՀՐ. (Գրքիցի) Մեր փեսացուն... (Գարձեալ քրքիջ):

ՏԻԳ. Հրանձոյ, զգոյ՛ զայս, որ այդ ծիծաղը լացի չփոխուի: Մենք այստեղ լուրջ գործի մասին ենք խօսում, դու բանը ծաղրի՞ ես գցում: Մեր մտածմունքը, մեր հոգսը քո բախտաւորութիւնն է, իսկ դու կարծում ես հետդ կատակ ենք անում:

ՀՐ. Ես ձեզ վրայ զարմանում եմ:

ՏԻԲ. Ի՞նչ զարմանալու բան կայ այստեղ:

ՀՐ. Չգիտեմ, ինձ ինչի տեղ էք դնում:

ԱՆ. Ախր ի՞նչ պակասութիւն ունի էս մարդը, որ էդպէս բարձրից ես խօսում: Մի քիչ տարիքով է, է՞դ չէ մենակ: Էլ ուրիշ ի՞նչ պակասութիւն ունի, թէ գիտես, ասա: Շէնք ու շնորհք ասես, ունի, ինքը բոյ ու բուսածով, կարգին աղամարդ...

ՏԻԳ. Մայրիկ, ի՞նչ ես դատարկ բաների ետևից ընկել: Գլխաւորն այն է, որ փող կայ ձեռքին, փող, հարստութիւն...

ԱՆ. Ես էլ հէնց դրան էի գալիս: Ի հարկէ, ամենից գըլխաւորը փողն է: Փողը որ կայ, ամեն բան կայ:

ՀՐ. Դուք իզուր էք միասին աշխատում ինձ համոզել:

ՏԻԳ. Ի՞նչ է ասում...

ՀՐ. Միթէ չէք տեսնում, որ իմ և նրա մէջ ոչ մի ընդհանուր բան չկայ և չէ կարող լինել: Ե՞ս ով և նա ով: Մենք օտար ենք միմեանց:

ԱՆ. Լսում ես, Տիգրան:

ՏԻԳ. Հը՞մ... Յետոյ:

ՀՐ. Մի կողմ թողնենք նրա արտաքինը... որ վերին աստիճանի հակակրեի է, եթէ չասեմ աւելին: Բայց գոնէ մարդու պէս կարողանայ երկու խօսք կապել իրար հետ—ասան այդքան գուրկ է նա մարդկային արժանաւորութիւնից: Երբ նա սկսում էր խօսել, ես հազիւ էի կարողանում պահել ծիծաղս:

ՏԻԳ. Յետոյ... էլ ի՞նչ ունիս ասելու:

ՀՐ. Շատ բան: Բայց ի՞նչ հարկաւոր է ասել: Բաւական է և այս, որ ես (շեշտելով) այդ մարդուն ոչ միայն չեմ սիրում, երեսը տեսնել չեմ կարող:

ՏԻԳ. Հա՛ւա:

ՀՐ. Այո, ես նրան արհամարհում եմ:

ՏԻԳ. Հիմա—կարելի է: Բայց յետոյ—կը սիրես:

ՀՐ. Ո՛չ մի ժամանակ:

ՏԻԳ. Ի՞նչ արեւը, քո արեւը—կը սիրես:

ՀՐ. Երբէք:

ՏԻԳ. Ես քեզ ասում եմ, կը սիրես, որովհետեւ մէջտեղ փող է զընգում, փող...

ԱՆ. Բաս դու չէս լսել, որ ասում են. «Շատ մի սէրբեր, ատել կայ, շատ մի ատիր, սիրել կայ»: (Կտրնտու լուծիւն):

ՏԻԳ. Հապա ի՞նչպէս անենք, մերժենք այն մարդուն: (Կրկին լուծիւն, Տիգրանը սկսում է յուզուել) Ես քեզ բան եմ հարցնում:

Ա.Ի. Աղջի, ինչո՞ւ ես պապանձուել...

ՏԻԳ. (Չեոքը խփելով սեղանին.) Մի բան ասա, վերջապէս:

ՀՐ. Տէ՛ր—Աստուած, քանի անգամ ասեմ: Միթէ պարզ չէ: Իհարկէ, մերժել:

ՏԻԳ. Մերժել... Ի՞նչ հեշտ վճռեցիր:

ԱՆ. Էս աղջկան մի հարցնող լինի, թէ դ՞ու ով ես, դ՞ու... Էնպէս է խօսում, կարծես շահագրէի թոռը լինը: Էն մարդը, ուրիշ բան չէ, գոնէ ձեռքին մի կարողութիւն ունի, մարդամէջ մի անուն ունի, բաս դու ի՞նչ ունես, որ էդպէս հպարտացել, հայիլ-մայիլ ես եղել վրադ... Փող ու բաժինը՞նձիկ ես պարծենում, տեսնենք, թէ մի ուրիշ առաւելութեամբ, որ քեթիկ էդքան վեր ես քաշել... Փառք Աստուծու, մի հրեշտակի զեղեցկութիւն էլ չունես, զր ասեմ, հա, դրանով ես պարծենամ:

ՀՐ. Ես ոչնչով չեմ կամենում պարծենալ:

ՏԻԳ. Չէ, Հրանձոյ, չէ: Դու շատ թեթեւ աչքով ես նայում հարցի վրայ: Խօսքը քո ամբողջ ապագային է վերաբերում: Չկարծես, որ այնքան էլ հեշտ բան է հիմիկուայ ժամանակում անփող աղջկան մարդու տալը... Եթէ հեշտ լինէր, դու վաղուց կարգուած կը լինէիր: Այն ինչ ժամանակը բաւական անց է կացել: Այժմ լաւ դէպք է ներկայացել: Հարուստ տեղից քեզ ուզող կայ: Եթէ ձեռքից տաս, իմացիր, որ բանդ պրծաւ: Այնուհետեւ նստիր ու սպասիր, թէ մի ուրիշ ուզող դուրս կը գայ:

ԼՐ. Շատ էլ չեմ ցաւի...

ԱՆ. Սրա ընկերները հիմի բոլորն էլ իրանց գլխի ճարը տեսել են: Ամեն մէկը մի օջախի տէր է գառել, ջուխտ-ջուխտ երկխոսների մայրութիւն է անում, տուն ու տեղը կարգին սարքած ինքն էլ մէջտեղ առօք փառօք բազմել է, ու ոչ ոք նրանց չի ասում, թէ աչքիդ վերեւ յօնք կայ... Վայ ինձ, վայ ինձ. մենակ սա է փացել էսպէս ձեռքը ծոցումը, հօրանց տանը նստած:

ՀՐ. (մի կողմ) Օ՛հ, միշտ և միշտ նստատեղներ...

ՏԻԳ. Հրանձոյ, դու արի՛ փեշիդ բարը վեր ամա՛ ու մեզ

լաիր: Ինչքան չլինի, մենք քեզանից աւելի շատ ենք ապրած, աշխարհիս հարն ու բարին քեզանից աւելի լաւ ենք հասկանում: Քո մեծ սխալը նրա մէջ է, որ դու կարծում ես, թէ առանց փողի սէր կը լինի:

ՀՐ. Ա՛խ, Աստուած... Ինձ ոչինչ չէ հարկաւոր, ոչ փող, ոչ սէր. ինձ միայն հանգիստ թողէք, ես ձեզանից միայն հանգիստ եմ ինդրում: Վերջապէս... ես չեմ կամենում մարդու գնալ:

ԱՆ. Ո՞նց թէ չեմ կամենում մարդու գնալ...

ՏԻՓ. Դա էն տեսակ բան է, որ քո կամքին թողնենք:

ԱՆ. Քանի քաղցր ենք խօսում հետը, էնքան ոտը առաջ է դնում:

ՏԻՓ. (Յուզամտոր խփելով սեղանին): Հրանոյշ, ես ասում եմ, բանը համաձայնութեամբ վերջանայ, թէ չէ...

ՀՐ. Թէ չէ—բռնութեամբ կը վերջանայ:

ՏԻՓ. Ես քեզ խորհուրդ եմ տալիս, որ ընդունես:

ՀՐ. Ծնորհակալ եմ խորհրդիդ համար: Բայց... Չեմ կարող:

ՏԻՓ. Իսկ երբ մենք պահանջում ենք:

ՀՐ. Երբէք:

ԱՆ. Է՛սքան էլ ինքնասած:

ՏԻՓ. Լաւ իմացիր, Հրանոյշ, որ դու այս տան մէջ ոչ ձայն ունիս, ոչ իրաւունք և ոչ սեփական կամք: Ինչպէս կը կարգադրեն մայրդ և եղբայրներդ, այնպէս էլ կ'անես: Դու պարտաւոր ես հնազանդուել մեր կամքին! (Գնում է: Մտնում է Սամսոնը՝ կոկ նազնուած, երեսը մարուր ածիլած եւ քեխերը սրած դէպի այտերը):

Տ Ե Ս Ի Լ 12.

Աննա, Սամսոն, Հրանոյշ:

ՀՐ. Սամսոն, ես քեզ եմ դիմում, ի սէր Աստուծոյ, պաշտպանիր ինձ... Սրանք ինձ կամենում են ստիպել, որ ես համաձայնեմ ընդունել... այն... այն... մարդու առաջարկութիւնը...

ԱՆ. Տես կարող ես, արտասուք թափի՛ր... Արտասուքիդ նայող չկայ:

ՍԱՄՍ. Հրանոյշ, մի՛թէ նա այնքան վատ է, որ դու...

ՀՐ. Այո՛, ես նրան երբէք չեմ կարող սիրել:

ՍԱՄՍ. Բայց դու պատճառ չունիս չսիրելու:

ՀՐ. Ես նրանից—խորշում եմ:

ՍԱՄՍ. Հիմք չունիս խորշելու:

ՀՐ. Սամսոն, ես զուլում եմ նրանից, հասկանում ես դու այս խօսքը:

ՍԱՄՍ. Իզո՛ւր, իզո՛ւր:

ՀՐ. Ես նրա հետ չեմ կարող մի օր ապրել:

ԱՄՍՍ. Շատ լաւ էլ կարող ես, փառաւոր կերպով:

ՀՐ. Ա՛խ, Աստուած, սրանց խօսքը մէկ է երևում: Ես բոլորովին մենտիկ եմ և անպաշտպան...

ՍԱՄՍ. Հրանոյշ, դու զուր ես հակառակում...

ՀՐ. Սամսոն, ուրեմն դ՞ու էլ սրանց հետ ես... բոլորդ էլ իմ դէմ...

ՍԱՄՍ. Այո, որովհետեւ մենք բոլորս էլ քո բարին ենք ցանկանում: (Գնում է):

ԱՆ. Կերպ: Յոյսդ Սամսոնի՞ վրայ էր: Դէ հիմի նստիր ու խելքդ գլուխդ հաւաքիր: (Գնում է: Հրանոյշը մնում է մենակ):

Տ Ե Ս Ի Լ 13.

Հրանոյշ (մենակ)

Օ՛հ, այս ի՛նչ կրակի մէջ ընկայ ես—Մինչև ե՛րբ ես ստիպուած պիտի լինեմ մաքառել սրանց հետ անձնական երջանկութեանս համար: Բայց ի՛նչ եմ ասում: Մի՛թէ միայն անձնական երջանկութեանս... Ամեն մի քայլիդ, ամեն մի շարժումքիդ, ամեն մի խօսքիդ համար պատասխան և հաշիւ պէտք է տաս սրանց... «Դու կամք չունիս», ասում եմ ինձ, «մեր կամքը օրէնք է քեզ համար: Այսպէս արա՛, քանի որ մենք այսպէս ենք կամենում: Սիրիր, ու՛մ որ մենք կ'ատենք, մենք այդ պահանջում ենք քեզանից»... Ի՛նչ դառը վիճակ—մնալ յաւիտեան սրանց ձեռին գերի, ձեռ ու ոտդ կաշկանդուած, առանց իրաւունքի, առանց հետեւելու սեփական հակումներիդ... Բարի Աստուած, ցո՛յց տուր ինձ մի կլք, ցո՛յց տուր ինձ իմ փրկութեան ճանապարհը: (Վերջին խօսքերը նստրտասանում է աղօթող կոյսի դիրքով):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐՆԷ

Բեմը ներկայացնում է նոյն տեսարանը, ինչ որ առաջին գործողութեան մէջ: Ժամանակը—հետեւեալ օրը, Իրիկնադէմ: Վարպէտը բարձրանալիս՝ Աննան նոր մոմեր է դնում մոմակալների մէջ: "

Տ Ե Ս Ի Լ 1.

Աննա (մնակ)

Էն գետինը մտած Ալէքսանն էլ չեկաւ, որ սամավարը սրբէր վերջացնէր: Բողազս պատուեց, էնքան գոռացի: Առաւօտուանից է ասում եմ անիրաւին. այ տղայ սամավարը սըրբիր, այ տղայ, իրուկունը ժամանակ չես ունենալ... էնքան պահեց սատկածը, որ օրը տուեց մութն առաւ: Հիմի երբ պիտի սրբի, երբ գցի: (Մտնում է Ալէքսանը՝ ձեռին մի զամբիւղ, որ լիքն է մրդիղէնով):

Տ Ե Ս Ի Լ 2.

Աննա. Ալիքսան.

Ան. Այ, տղայ, էս ո՞ւր ես կորել, որ տուն չես գալիս: Ոտդ կոտորուել՝ ճամբին էիր ֆնացել: Օրը մթնեց, սամավարն էլ երբ պիտի սրբես:

Ալ. Այ խանում...

Ան. Ը՛հ, ցաւս տամ քեզ...

Ալ. Ի՞նչ անեմ, այ խանում, բոլորդ էլ վազացնում էք: Մարդու գլխին խելք էք թողնում որ... Մէկը էստեղից է ձէն տ ալիս, մէկն էստեղից: Սա էս է պահանջում, նա էն: Դանակչանգալն էի ուզում սրբել. Մամսոն աղան եկաւ վրես գոռաց, «Տօ, մունդրիկ, լուացարանը դադարկ է, խի՞ չես ջուր ածում»: Գնացի, որ ջուր բերեմ, աղջիկ պարոնն է բղաւում. «Անպիտան, կոշիկներս երբ պէտք է սրբես»: Մարդ գլուխ կը կորցնի էստեղ: Չես իմանում, որն անես, որը թողնես: Եւ քանի կոտոր լինեմ, խանում, ես հազար ձեռք ունիմ:

Ան. Լաւ, լաւ, հասկացանք. բաւական է:

Ալ. Քիչ առաջ էլ գեղն առայ՝ սահմավարը սրբեմ,

Տիրքան աղան գլխիս կանգնեց. «Այ տղայ, զամբիւղը վեր առ բազար գնանք»: Ասի, աղա, ձեռիս բան կայ, թող վերջացնեմ, յետոյ: Ու նա էլ տարաւ բերաւ. «Հայվան, ինչ որ քեզ հրամայում եմ, էն արն»: Աստուած վկայ, խանութ, էնքան աւանակ, հայվան էք ասել, որ դրուստ հայվան եմ դառել:

Ան. Էլի սկսեց ճաճանակի պէս, վերջ չկայ: Գնա, գնա:

Ալ. Սրանք ո՞ւր տանեմ, խանում:

Ան. Տար բուֆետը, ես էլ գալիս եմ: Բաս աղան ո՞ւր

ֆնաց:

Ալ. Կանդիտերի մօտ մտաւ. գալեա պիտի առնէր:

Ան. Դէ տար, տար: Չամբիւղն էրպէս կը դնես բուֆետի մօտ, ձեռ չես տայ: Ես կը գամ կը տեղաւորեմ:

Ալ. (Գնում է գուլիք թափահարելով) բան-բան-բան... Մարդ եմ ասում, որ սրանց ուշուցներին դիմանայ: (Տեսնելով, որ տիկնոջ եղեմն այն կողմն է): Այ, ես էլ էսպէս կ'անեմ: (Չամբիւղի միջից մի ինչ որ բան է վերցնում գցում բերանը եւ ծամելով հեռանում: Մտնում է Արամանը):

Տ Ե Ս Ի Լ 3.

Աննա. Արաման.

Ան. (մի կողմ) Ի՞նչ անժամանակ...

Ար. Տիկին, բարե՛ ձեզ: Ես եկայ ձեր պատասխանն իմանալու:

Ան. Ես ձեզ չէի ասում, որ որդիքս...

Ար. Դուք խօսեցիք նրանց հետ:

Ան. Ինչպէս չէ: Բայց երկուսն էլ դէմ են:

Ար. Երկուսն էլ դէմ: Մի՞թէ, ճշմարտ, բեմը ձեր աչքում այնքան անարդուած է, որ անպատուութիւն էք համարում ձեզ համար, որ ձեր աղջիկը սա դնի նրա վրայ:

Ան. Բանը եղ չէ, պարոն: Ուրիշ պատճառ կայ:

Ար. Կարելի՞ է արդեօք իմանալ պատճառը, եթէ միայն դա դադանիք չէ:

Ան. Մի՞թէ ոչինչ չէք լսել:

Ար. Ո՛չ, ո՞ւմ մասին:

Ան. Էսօր Հրանոյշի նշանդրէքն է:

Ար. Ի՞նչ էք ասում, տիկին: Ես ոչինչ չեմ իմացել:

Քոյլ տուէք ուրիմն ձեր աչքը լուս անել:

Ան. Շնորհակալ եմ:

Ա.Ր. Բայց միթէ նշանդրէքը կարող է խանգարել, որ նա...

Ա.Ն. Նշանուած աղջիկը... թատրոնումը խաղայ... դա սկի լսուած բան է... Դա հօ անունը գետնով տալ է նշանակում... էր էր պակաս... Չէ, չէ, չէ. բերան չբանաք դրա մասին...

Ա.Ր. Ուրեմն ես միանգամայն յոյս կտրեմ:

Ա.Ն. Միանգամայն... Մեր խօսքը խօսք է:—է՛հ, ինձ ներողութիւն կ'անէք, պատրաստութեան մէջ ենք, գլուխս խառը, ժամանակ չկայ... (Գնում է):

Ա.Ր. Հրանոյշը նշանուած է... Այլ քեզ նորութիւն: է՛հ, ուրեմ ես այստեղ աւելորդ եմ: (Կամենում է՝ գնալ: Այդ րոպէին մտնում է Հրանոյշը և կանչում նրա ետեւից. «Արան Արաման»: Արամանը դրան մօտից ետ է դառնում ուրախ):

Տ Ե Ս Ի Լ 4.

Հրանոյշ, Արաման.

Ա.Ր. Ա, օրիորդ Հրանոյշը:

Հ.Ր. Բարև ձեզ:

Ա.Ր. Շնորհաւորում եմ: Դուք արդէն նշանուած էք:

Հ.Ր. Ո՛չ. այդպիսի բան չկայ:

Ա.Ր. Այս րոպէիս ձեր մայրն ասաց: Իբր թէ մինչև անգամ այս երեկոյ նշանդրէք է... Մնայէս շտապում էր, այնպէս գլուխը խառն էր, որ ես չկարողացայ մի երկու բերան խօսք խօսել հետը:

Հ.Ր. Այո՛, բայց... թողնենք այս... Ես եկայ իսկապէս ներողութիւն խնդրելու ձեզանից, որ ձեր առաջարկած դերը չեմ կարող վերցնել:

Ա.Ր. Ես շատ ցաւում եմ, օրիորդ: Ինձ թւում է, որ եթէ ես կ'ին լինէի, ձեզանից աւելի քաջ կը լինէի:

Հ.Ր. Այո՛, այդպէս ասում էք, որովհետև տղամարդ էք: Դժբախտաբար, մեզ կանանցս թոյլ չեն տալիս մեր սեփական կամքն ունենալ: Մենք հնարաւորութիւն չունինք մեր վիճակը տնօրինելու ըստ մեր ցանկութեան: Մենք հլու հնազանդ ենք մեր խնամակալներին, միւսնոյն է, թէ ուրքեր են այդ խնամակալները. ծնող, եղբայր, ամուսին թէ սկեսուր... Այո՛, գերիներ ենք մենք, խեղճ կանայքս, յաւիտենական գերիներ:

Ա.Ր. Օրիորդ, թող այդ ասեմ նրանք, որոնց միտքը կաշկանդուած է նախապաշարմունքով, որոնց կարծիքով կ'ինը ա-

սանց տղամարդու մի հատ քայլ անել չէ կարող կեանքում, բայց դուք—ձեր գիտակցութեամբ հանդերձ...

Հ.Ր. Ի՞նչ կարող եմ անել ես իմ գիտակցութեամբ հանդերձ, ես՝ մի թոյլ և անօգնական արարածս... Բաւական է մի չնչին անհնազանդութիւն—և իմ վերջին կապն իմ ընտանիքի հետ արդէն խզուած է... Իմ դէմ կը զինուեն մայրս, եղբայրս, ազգականներս և ծանօթներս... Եւ այն ժամանակ արի դուրս եկ դրանց խօսքի տակից... Ես ուր գնամ այն ժամանակ, ում պաշտպանութեան դիմեմ...

Ա.Ր. Շատ ափսոս, օրիորդ, որ դուք մերժում էք: Ես՝ ճիշտն ասած, մեծ յոյս էի դրել ձեզ վրայ:

Հ.Ր. Իսկ ես ի՞նչպէս եմ ափսոսում, եթէ իմանաք... Ա՛խ, թատրոն—դա իմ իրէջան է: Երևակայում եմ, թէ ինչ մեծ հաճոյք է դերասանի համար (աւելի եւ աւելի ոգևորելով) հարիւրաւոր հանդիսականների առջ երևալ բեմի վրայ, զգալ, որ այդ րոպէին ամենքն հիացած նայում են իրան, հետևում են ամեն մի շարժուածքին, ամեն մի խօսքին... Ամբողջ թատրոնը՝ կարծես մի հողի և շունչ դարձած՝ համակուած է քո զգացմունքով, դիւթական ուժով կարող ես իշխել ամենքի վրայ—ճիծաղեցնել, լացացնել և ոգևորել:

Ա.Ր. Այո՛, օրիորդ, դերասանի փառքը նախանձելի է, որովհետև նա աղմկալից է և փայլուն, թէև—շատ կարճատև:

Հ.Ր. Այդ ճշմարիտ է: (Ռոպէական լուծիւն):

Ա.Ր. (Վեր է կենում, ժպտալով) Ուրեմն, օրիորդ, ես հետոսնամ ձեռնուռնոյն:

Հ.Ր. Հազար ներողութիւն եմ խնդրում:

Ա.Ր. Պատիւ ունիմ: (Հրաժեշտ տալով գնում է: Հրանոյշը տըխուր է և մտածմունքի մէջ. յետոյ սկսում է):

Տ Ե Ս Ի Լ 5.

Հրանոյշ (մնակ)

Մենք չենք կամենում—և վերջացաւ... Եւ այսպէս կամացկամաց կը խլանայ, կը մեռնի իմ մէջ սէրը, ձգտումը դէպի բեմ... Գոնէ այս միտիթարութիւնն է մնում ինձ—կարգալ, ոգևորուել և երազել: (Բաց է անում դիրքը և արտասանում).

«Մնաք բարով, լեռներ, սիրուն արօտներ, Դուք էլ մնաք բարով, խաղաղ հովիտներ, Ես էլ չեմ գալու այստեղ ման գալու, Վերջին բարևս եկայ ձեզ տալու:

Իմ ջրած դաշտեր, իմ անկած ծառեր,  
Աճեցէք զուարթ, շատ ու շատ օրեր:  
Մնաք բարով, ծմակներ, դուք պաղ աղբիւրներ,  
Եւ դու, արձագանք, հովտիս անոյշ ձայն,  
Որ միշտ երգերիս պատասխանում էր:  
Գնում է Յովհաննան անդարձ յաւիտեան:

(Կամայ կամայ անցնում է միւս սենեակը: Ոտանաւորի կիսումը վար-  
դուշը՝ կանգնած դրան մէջ՝ լսում էր նրան ծաղրական դէմքով: Երբ Հրա-  
նոյշը հեռանում է, նախաջ է դալիս):

Տ Ե Ս Ի Լ 6.

Վարդուշ (մենակ)

(Գրքիցով) Սրան նայեցէք: Այս երեկոյ նշանդրէքն է. փա-  
խանակ զուգուելու զարդարուելու, այստեղ դե-րա-տա-նու-թիւն  
է անում... հն-հն-հն... (մտնում է Աննա):

Տ Ե Ս Ի Լ 7.

Աննա, Վարդուշ,

Ան. Հը՛, ի՞նչ կայ էգպէս քչքչում ես... Երանի քեզ ոչ  
խելք ունիս, ոչ դարդ:  
ՎԱՐԴ. Ի՞նչ ես ուզում ինձնից, մայրիկ: Վն, ծիծաղե-  
լըն էլ արգելուած է:  
Ան. Գնա՛ պատրաստուիր, ժամանակ է:  
ՎԱՐԴ. Ի՞նչու ինձ ես ասում, մայրիկ: Հրանոյշը պիտի  
շտապի, ոչ թէ ես: Հօ ինձ չեն նշանում, այլ նրան:  
Ան. Նա իր համար գլուխը քաշ հագնում է:  
ՎԱՐԴ. Ո՞վ ասաց հագնում է: Հէնց այս րոպէիս չէր այստեղ:  
Ան. Էստեղ ի՞նչ էր անում:  
ՎԱՐԴ. Ի՞նչ պիտի անէր—գերասանութիւն:  
Ան. Ի՞նչպէս թէ գերասանութիւն:  
ՎԱՐԴ. Ա՛յ նայիր. այսպէս կանգնած, գիրքը ձեռին  
բարձր ձայնով կարդում էր ու ինքն իր վրայ հիանում:  
Ան. Հիմի գիրք կարդալու ժամանակ է:  
ՎԱՐԴ. Հէնց բանն էլ այդ է:  
Ան. (Չարացած) ես նրան գիրք կարդալ ցոյց կը տամ:  
(Արագ անցնում է միւս սենեակը):  
ՎԱՐԴ. Վնյ Հրանոյշին... (Յուզուած մտնում է Հրանոյշը՝  
գիրքը ձեռին). Հիմա սա ինձ չմեղադրի: (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ 7.

Հրանոյշ (մենակ)

Ես ռը փախչեմ, ռը կորչեմ, որ ազատուեմ այս հոգե-  
հաններիցը... Մի րոպէ գաղար չեն տալիս... Մաշեցին ինձ...  
Այս ինչ դժոխքի մէջ եմ ես...

(Արագ մտնում է Աննան՝ սաստիկ գայրացած եւ խլիով գիրքը աղջկայ  
ձեռքիցը՝ շարտում է օդի մէջ):

Տ Ե Ս Ի Լ 9.

Աննա, Հրանոյշ.

Ան. Դէ հիմի գնա՛ ու կարդա՛...  
ՀՐ. (Վրդալուած) Մայրիկ...  
Ան. Հը՛, ի՞նչ կայ...  
ՀՐ. Դու ինձ... յուսահատեցնում ես...  
Ան. Դու ես ինձ յուսահատեցնում, դու... էս ծօյին է որ  
մեր գլուխը բերում ես...  
ՀՐ. Մայրիկ, մեծ կին ես, աչքերդ արիւն էլ ցուել... Ին-  
չի համար ես այդպէս բարկացած... Ես ձեզ քանի անգամ եմ  
ասել. մի կանչէք այդ մարդուն, մի կանչէք...  
Ան. Աղջի, ինձ ասա՛ տեսնեմ. ինչո՞ւ ես էգպէս ներհա-  
կուել:  
ՀՐ. Մայրիկ, ի՞նչ ես ուզում ինձանից:  
Ան. Ես ուզում եմ, որ էս րոպէիս գնաս ու պատրաստուիս  
փեսացուի գալուն:  
ՀՐ. Ես նրա առաջ չպիտի դուրս գամ:  
Ան. Ուրեմն մտքումդ դրել ես մեզ խայտառակել:  
ՀՐ. Ես մեղաւոր չեմ, եթէ...  
Ան. Աստուած սիրես, յիմար յիմար դուրս մի տա: Ո-  
չինչ չեմ ուզում լսել: Գնա՛ ու պատրաստուիր: Դէ, շնտ արա:  
(Կամենում է ուժով տանել):  
ՀՐ. Թո՛ղ ինձ, թո՛ղ մայրիկ, թո՛ղ, ասում եմ:  
Ան. Հրանոյշ, ախպէրդ կը գայ, էլ ձեռքից չես պրծնի:  
ՀՐ. Ի՞նչ պիտի անի: Հօ չի մորթիլու:  
Ան. Կը մորթի էլ ու հոգիդ էլ կը հանի:  
ՀՐ. Տէր Աստուած, գոռով էլ բան կը լինի: Ես չեմ ու-  
զում այն մարդուն, մայրիկ, չեմ ուզում:

Ան. Աղջի, ասենք թէ էդ մարդը մի քիչ քո սրտովը չէ, լաւ: Բաս քո խղճմտանքն ո՛ւր մնաց: Էս տանը մենակ դճւ ես: Չե՞ս իմանում, թէ քանիսի ճանապարհն ես փակած պահել...

ՀՐ. Ե՞ս—հում ճանապարհն եմ փակած պահել:

Ան. Ինձանից էլ լաւ գիտես:

ՀՐ. Մայրիկ, ի սէր Աստուծոյ, պարզ խօսիր: Դու այնպիսի բան ասացիր որ... Ինչպէս թէ ես ճանապարհ եմ փակել... Օրինակ, հում, հում ճանապարհն եմ փակած պահել:

Ան. Հէնց մէկը—ախպօրդ:

ՀՐ. Տիգրանի՛:

Ան. Հա, հէնց մէկը Տիգրանի: Ձեր հոգսիցը ձերացաւ խեղճ որդիս: Մաղերը սպիտակեցին, էնքան սպասեց ձեզ: Շուտով քառասուն տարեկան կը դառնայ, ու մինչև օրս չկարողացաւ մուրազին հասնի, մի հալալ կողակցի արժանանայ... Բաս էս խղճմտանք է, քեզ եմ հարցնում:

ՀՐ. (Վիրաւորում) Բայց ես ի՞նչ մեղք ունեմ այստեղ: Մի՞թէ Տիգրանը ի՞մ պատճառով է, որ չէ ամուսնանում: Դա նորութիւն է ինձ համար... Ես չգիտէի, ճշմարիտ... Շատ դարձանալի է...

Ան. Լաւ, էդքան էլ միամիտ չես: Էլի վարդուշն ասի, կը հաւատամ:

ՀՐ. Բայց ես ինչո՞վ եմ նրան խանգարում: Թո՞ղ ամուսնանայ, երբ կամենում է, ում հետ կամենում է: Ես միայն կ'ուրախանամ... չ

Ան. Կարծում ես, ախպէրդ խազնի վրայ է նստած, որ համ տունը պահի, համ ձեզ ուտացնի, համ կնկայ ու երեխաների դարձը քաշի...

ՀՐ. (Նորը վիրաւորում) Ահա թէ ինչ... Ուրեմն խօսքը դրան մասին է... (գնալով աւելի եւ աւելի փղծկում է) ուրեմն ինչ որ անում է, իմ կերած մի կտոր հացն է անում... Դրան համար եմ ես ձեր աչքի փուշը դառել... (Արտասուքը սրբում է):

Ան. Մածոնն էլ էստեղ է դէմ առել մնացել: Նրա էլ կարգուելու ժամանակն է: Է՛հ, ասենք թէ նա մի քիչ ջահէլ է, դեռ էլի կարող է սպասել: Բայց ի՞նչ պատասխան կը տաս երկնային դատաւորի առաջ, եթէ քո պատճառով պատիկ քոյրդ էլ մնայ տանը ու անշուր ծաղկի պէս թոռմի, չորանայ... Նրա մեղքի տակիցը, աստ, տեսնեմ, կարող ես դուրս գալ:

ՀՐ. Մայրիկ, պարտական մնաս, եթէ իմ պատճառով վարդուշին թողնես տանը և ուզողին մերժես:

Ան. Յետո՞յ, ես կը թողնեմ, որ պատիկն իր ոտը մեծիցը առաջ դնի, մեծի անունը կոտրուի:

ՀՐ. Ի՞նչու պէտք է մեծի անունը կոտրուի: Բոլորովին ո՛չ:

Ան. Աղջի, չէ՞ն ասի, թէ երևի, մեծը մի պակասութիւն է ունեցել, որ կողքովն անցել են, պատիկին առաջ գցել:

ՀՐ. Խելօք ու հասկացող մայրերը երբէք այդպիսի բան չեն անում, փոքրիկին չեն անբախտացնում մեծի պատճառով:

Ան. Հէնց ամենից խելօքներն էդպէս կ'անեն: Ու յետոյ իմանում ես, թէ ի՞նչ կը լինի նրա դրութիւնը... Վայ էս տեսակ աղջկան... Ձեռն ընկնի, լաւ չէ, նրա պէս քանբախտը:

ՀՐ. Մայրիկ, հաւատա՛, ինձ համար հազար անգամ աւելի լաւ է—երբէք չամուսնանալ, ծերանալ հայրենի տանը, միշտ հարազատների շրջանում, նոյն իսկ շունչը փչել եղբայրների ձեռքերի վրայ, այո, այդ հազար անգամ աւելի լաւ է ինձ համար, քան ամբողջ կեանքը կապել մի այնպիսի արարածի հետ, որից խորշում ես, որին երբէք չես կարող սիրել, որի հետ, հաստատ գիտես, մի հատ ուրախ օր չես տեսնելու, այլ դատապարտուած ես միայն կամաց կամաց հալ ու մաշ լինել... հապա ես մէջը չեմ, մայրիկ:

Ան. Էլ ի՞նչ դարդ... Է՞դ էր մնացել, որ պատուես ու հօրանցդ տանը բայդուշ դառնաս... (մտնում է Տիգրանը՝ ձեռին երկու թղթէ արկղ)

Տ Ե Ս Ի Լ 10

Աննա, Տիգրան, Հրանդ:

ՏԻԳ. (Արկղները տալով մօրը) Մայրիկ, սրանք վերցրու խմորեղէն է: (նկատելով Հրանդին) վահ, Հրանդ, դու դեռ այդ դրութեան ես: Ի՞նչու ես սե հագել: (նայելով ժամացոյցը եւ ցոյց տալով քրոջը) Տես, ժամը քանիսն է: Շուտով փեսացուն կը գայ, իսկ դու...

Ան. Հը՛, հիմի արարմունքդ յայտնեմ Տիգրանին:

ՀՐ. Յայտնիր: Ծածուկ բան չկայ այստեղ:

ՏԻԳ. Մայրիկ, բան է պատահել:

Ան. Ձէ՛, մի առանձին բան չի պատահել: Հրանդն է էլի, մի քիչ հակառակութիւն է անում:

ՏԻԳ. Ուրեմն դու դեռ խելքի չես եկել, Հրանդ:

ՀՐ. Տիգրան, ես արդէն ասել եմ, հիմա էլ կրկնում եմ: Գանի դեռ ուշ չէ, յայտնեցէք այն մարդուն որ չգայ:

ՏԻԳ. Չը գո՞յ:

ՀՐ. Այն, թող իզուր նեղութիւն չկրի: Միենայն է, եթէ գայ, ես ոչ նրա առաջը պիտի դուրս գամ և ոչ նրա բերած նշանն ընդունեմ:

ՏԻԳ. Հը՛մ... Շատ լաւ... Այդպէս էլ կ'անենք... Իսկոյն (ցոյց է տալիս թէ կամենում է գնալ):

ԱՆ. Տիգրան, սրա խելքո՞քն ես ընկել:

ՏԻԳ. Բաս ի՞նչ... Թողնենք հիւրերը հաւաքուին, փեսացուն գայ, և յետոյ նրանց առաջ մենք գետինը մտնենք... Ո՛չ, ես այդ չեմ կամենում... Գնա՛, գնա՛, ինչ կ'ուզես, արա՛: Դու ոչ մայր ես ձանաչում, ոչ եղբայր: Գնա՛, ես էլ քեզ չեմ ձանաչում:

ՀՐ. Դրանով ի՞նչ ես կամենում ասել:

ՏԻԳ. Այն, որ ես էլ Հրանոյշ անունով քոյր չունեմ:

ՀՐ. Ի՞նչպէս թէ չունես... Եթէ ես քո քոյրը չեմ, ուրեմն ես օտար եմ այս տանը, ուրեմն ես իրաւունք էլ չունեմ այստեղ մնալու:

ՏԻԳ. Ի՞նչպէս կ'ուզես, այնպէս հասկացիր:

ՀՐ. Այդ դէպքում աւելի լաւ է պարզ ասես, որ ես աւելորդ եմ այս տանը...

ՏԻԳ. Ես արդէն ասացի, ինչ որ հարկաւոր էր: Եթէ քոյրը չէ խղճում իր եղբորը, ի՞նչու պէտք է եղբայրը խղճայ իր քրոջը:

ՀՐ. Այդ ես եմ այդքան անխիղճ:

ՏԻԳ. Այն, դու... որովհետեւ դու ոչ ոքի չես խղճում, չես մտածում, թէ քո յամառութիւնը ո՞ւր է տանում թէ քեզ թէ մեզ բոլորիս: Չես հասկանում, թէ քո հաճոյքին ծառայելով ի՞նչ անտանելի դրութիւն ես ստեղծել մեզ համար, ի՞նչպէս կապել, կաշկանդել ես մեր ամենքի ձեռ ու ոտը...

ՀՐ. Եթէ ես այդչափ անտանելի եմ, այդչափ հրէշաւոր եմ, էլ ի՞նչի էք սպասում. վերցրէք և ձեռիցս բռնած՝ ինձ փողոց նետեցէք:

ՏԻԳ. Վա՛, այս ինչ դրութիւն է, Տէր Աստուած... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, իմ ամբողջ կեանքը վեր գնել ձեզ համար: Տարին տասն երկու ամիս շան պէս շարչարուիլ մի քանի կողէկի համար որ վերջն էլ ձեռք ընկածը բեր ամա սրանց համար 14 մանէթանոց նորաձե կողիկներ առնեն, 25 մանէթանոց գլխարկներ ծածկեն, 50 մանէթանոց դէյրաններ հագնեն, զուգուած փողոցները շափշփեն և աշխարհ գարմայնեն իրանց թանկագին զգեստներով...

ՀՐ. (Աշխատում է զսպել հեկեկանքը, աչքերը ցլուած են արտասուներով):

ՏԻԳ. Մղկտա՛...

ԱՆ. Է՞ս էլի ուզում լսել, էլի:

ՏԻԳ. Մղկտա՛ այդպէս... Լաւ ես անում... Ես էլ եմ շատ մղկտացել, բայց ծածուկ, և դու չես տեսել իմ արտասուքը... Բաս մեղք չենք մենք, մեզ Աստուած չէ ստեղծել... Չէ՞ որ ես էլ մարդ եմ, չէ՞ որ ես էլ ունիմ իմ ցանկութիւնները, ես էլ եմ կամենում վերջապէս ապրել իմ ուզածի պէս, կեանքումս մի օր տեսնել... Իմ հասակի մարդիկ հիմա բոլորն էլ վաղուց ամուսնացած՝ որդոց տէր են դարձել, շրջապատուած սիրելիներով՝ նրանցով մխիթարուած են, նրանց շրջանի մէջ հանգիստ են գտնում... Իսկ ես—ի՞նչի եմ նման... Ծերութեան մօտեցած, մազերս սպիտակ, առողջութիւնս վեր դրած՝ դեռ նոր-նոր պիտի սկսեմ ապրել... Ա՛յ, հոգը իմ գլխին... (Վերածում է իր զլուխը):

ՀՐ. (Վեր է կենում երեքալով) Ներքի՛ր... ներքի՛ր ինձ... (Յուսահատական հեկեկանքով նետում է եղբոր մօտ՝ ծնկաչոք, կամենում է շարունակել, բայց արտասուքից խեղտուելով չէ կարողանում):

ԱՆ. Ա՛խ, որդիքս...

ՏԻԳ. Այս խօսքերը ես քեզ երբէք չէի ասի, բայց ինչ անեմ, ինձ հարկադրեցիր, ինձ ստիպեցիր, որ ասեմ, որովհետեւ... որովհետեւ... այս տեղս... շատ էր ցուած...

ՀՐ. (Կրկին դառը լացով) Ներքի՛ր... ներքի՛ր ինձ... ամեն մի կտոր հացի համար, որ ես բերանս եմ դրել, ամեն մի շորի համար, որ հագել եմ, ամեն մի դարդաբանքի համար, որ գնել եմ քո աշխատանքով... (Կտրում է վրի յուլունքաւոր մանեակը, որի հատիկները թափում են յատակի վրայ):

ԱՆ. Էդ ի՞նչ ես ասում, Հրանոյշ, քո կերածն էլ քեզ հաւալ, քո խմածն էլ...

ՀՐ. Ո՛չ, ասա՛. հարամ լինի քո կերածն էլ. քո խմածն էլ...

ՏԻԳ. Հրանոյշ...

ՀՐ. Այո, դու ճշմարիտ ասացիր: Ես անտանելի դրութիւն եմ ստեղծել ձեզ համար, կապել, կաշկանդել եմ ձեր ամենքի ձեռ ու ոտը, փակել եմ ձեր ձանապարհը... Ես մի ձրիակե՛ր եմ եղել այս տանը... (Կամենում է գնալ):

ԱՆ. Հրանոյշ, ո՞ւր գնացիր:

ՏԻԳ. Հրանոյշ, մի պատասխան տուր վերջապէս: Ասա՛, ի՞նչ անենք: (Պատուա):

ՀՐ. (Դրան մօտից) Ես—խոստանում եմ շատ շուտով բաց անել ձեր բոլորի ձանապարհը:

ՏԻԳ. Արի՛ ու մի բան հասկացիր: (Մտնում է Մամոնը, ձեռքին մի շքեղ ծաղկափունջ, իսկ իր կրծքի վրայ կայքած է մի թարմ վարդ):

Տ Ե Ն Ս Ի Լ 11.

Աննա, Տիգրան, Սամսոն.

ՍԱՄՍ. (Բարձր բռնկով ծաղկափունջը) Հրանդշի համար...

ԱՆ. Նա արժանի է դրան, որ առել ես:

ՍԱՄՍ. (Չարմացած) Վա...

ՏԻԳ. Չարմանալի մարդ ես, Սամսոն: Այս սրտեղ ես դու:

ՍԱՄՍ. Աստուած սիրեք, ի՞նչ է պատահել, այդպէս թթուել էք: Մայրիկ:

ԱՆ. Չի էլ մեռնում ձեր մայրիկը, որ միանգամից ազատուի իր դարդիցը:

ՍԱՄՍ. Տէր, մեղա քեզ, Աստուած.

ՏԻԳ. Տօ, մարդ Աստուծոյ, դու երբայր չէս: Քրոջդ նշանդրէքն է, դու սրտեղ ես:

ՍԱՄՍ. Բուլվարումը: Մեղք բան է ման գալը:

ՏԻԳ. Այտտեղ մեր սրտներինքը արիւն է կաթում, մոլորուած ֆնացել ենք ու չենք իմանում, թէ ի՞նչ անենք, որ մեր այն աննամուսին խելքի բերենք, սա քոճերի ետեկիցն է թրև գալիս բուլվարումը...

ՍԱՄՍ. Քոճերի ետեկից... Դա իմ գործն է... Շատ լաւ էլ անում եմ... Մայրիկ, ի սէր Աստուծոյ, ասա, ի՞նչ է պատահել:

ԱՆ. Էլ ի՞նչ կը պատահէր... Քրոջդ արարմունքը նոր ես իմանում:

ՍԱՄՍ. Ի՞նչ է արել, որ:

ԱՆ. Փեսացուի առաջ, ասում է չպիտի դուս գամ:

ՍԱՄՍ. Գլուխը քաշրը... Չի ուզում, չդուս գայ... Շատ հարկաւոր ե... (Չարացած անցնում է միւս սենեակը):

Տ Ե Ն Ս Ի Լ 12.

Աննա, Տիգրան.

ԱՆ. Տիգրան, բա ի՞նչ անենք:

ՏԻԳ. Յետաձգենք, մինչև որ տեսնենք, թէ...

ԱՆ. Ախր փեսացուն հիմի կը գայ:

ՏԻԳ. Կ'ասենք, ներողութիւն, այժիկը հիւանդացաւ: (Չանգը տալիս են):

ԱՆ. Հոգը գլխիս... Եկան: (Շտապ հեռանում է մտնում է Չարօն):

Տ Ե Ն Ս Ի Լ 13.

Տիգրան, Չարօ.

ՉԱՔՕ. Բարով, Տիգրան, ջան... Մի ձեռքդ խփիր, է...

ՏԻԳ. Չարօ, փեսացուն գալիս է...

ՉԱՔՕ. Փեսացուն գալիս է, էն էլ ոնց է գալիս... Մի անտիկա բռնկանտի մատանի է բերում, որ...

ՏԻԳ. Է՛հ, մեր դարդը մատանին չէ...

ՉԱՔՕ. Ի՞նչ հրամայեցիր:

ՏԻԳ. Չարօ, գիտես ի՞նչ, այս ըստէիս, առանց ժամանակ կորցնելու, վազեվազ պիտի գնաս փեսացուի մօտ...

ՉԱՔՕ. Հը...

ՏԻԳ. Ու կը ասես, որ չգայ...

ՉԱՔՕ. (Չարմանքից կարծես սարսափած) Վա՛հ...

ՏԻԳ. Էլ դարմանալու ժամանակը չէ...

ՉԱՔՕ. Ախր ի՞նչ պատահեց:

ՏԻԳ. Ոչինչ... այնպէս... չյաջողուեց...

ՉԱՔՕ. Մեղա քեզ, Աստուած:

ՏԻԳ. Եթէ պատճառը հարցնի, կ'ասես այժիկը յանկարծ հիւանդացաւ:

ՉԱՔՕ. Յանկարծ... սատանի անկաջը խուլ, հօ ընկաւ... Եր չէ:

ՏԻԳ. Ի՞նչ ընկնաւ որ, ի՞նչ ես խօսում:

ՉԱՔՕ. Ախր յանկարծ էլ բան կը լինի:

ՏԻԳ. Դէ որ եղաւ:

ՉԱՔՕ. Ես հիմի ի՞նչ երեսով նրա աչքին երևամ:

ՏԻԳ. Դէ, Աստուած սիրես, Չարօ, շուտ արա:

ՉԱՔՕ. Էլ ճարս ի՞նչ: Պիտի գնամ էլի:—Լաւ. բա երբ բերի նշանը:

ՏԻԳ. Չեմ իմանում, մենք իմաց կ'անենք... Դէ, Չարօ, քեզ տեսնեմ, թե առ ու թո՛ւր:

ՉԱՔՕ. Վա, բանը շատ ծուռ է գնում: Աստուած վերջը բարի անի: (Դռան մօտից վերադառնալով) Տիգրան ջան, չարդ տանեմ, ինձ մի բիշ...

ՏԻԳ. Փող ես ուզում: Հը, առ, է, առ...

(Նրան փող է տալիս) Միայն շուտ արա...

ՉԱՔՕ. Շնորհակալ եմ: Մտի պէս կը թռչեմ: (Շտապ հեռանում է:)

ՏԻԳ. Օ՛հ, հազիւ ազատուեցի: (Բարկացած անց ու դարձ է անուամ: Մտնում է Աննան:)

Տ Ե Ս Ի Լ 14.

Աննա, Տիգրան.

Ան. Զաքոն գնաց:

ՏԻԳ. Պատասխանը տարաւ:

Ան. Հիմի փեսացուն ինչպէս կը նեղանայ:

ՏԻԳ. Սրանից յետ: Ամեն բան վերջացաւ:

Ան. Ուրեմն էն անզգամը մեզ բոլորիս, յաղթեց, իր սածն արաւ:

ՏԻԳ. Բաս չէ:

Ան. Ը՛հ, գետինը մտնես, դու, Հրանոյշ: (Մտնում է Վարդուշը):

Տ Ե Ս Ի Լ 15.

Աննա, Տիգրան, Վարդուշ:

ՎԱՐԴ. Մայրիկ, նշանդբէքը խանդարուեց:

Ան. Աղջկայ երեսին որ մեռոն չլինի, նշանդբէքն էլ կը խանդարուի, ու...

ՎԱՐԴ. Ես էլ յիմարի պէս մի ժամ է հայելու առաջ կանգնած՝ զարդարում եմ: Հիմա գնանորից շորերդ փոխիր... Թնւ... (Վարդուշը գնում է: Տիգրանը շարունակ անց ու դարձ է անուամ եւ գնալով աւելի ու աւելի բորբոքում է):

Տ Ե Ս Ի Լ 16.

Աննա, Տիգրան.

ՏԻԳ. Օ՛հ, ինչպէս կատաղութիւնս բռնել է...

Ան. Հանդարտուիր, որդիս: Ի՞նչ ես արիւնդ պղտորում:

ՏԻԳ. Գլուխ եկած բանը ճնց փչացրեց... նա էն աղջիկ տեղովը մեզ բոլորիս յաղթի, իր մատների վրայ խաղացնի մեզ... Ը՛հ, ես նրան...

Ան. Աչքներս լուս: Հիմի էլի բամբասանքը կըսկսուի:

ՏԻԳ. Աստուած վկայ, սիրտս առում է. գնան ու անզգամի մազերիցը բռնած՝ տուր պատերին ու ջարդ ու փշո՛ւր արա...

Ան. Մի անգամ որ աչքին երեսս, էլ չի համարձակուի մեր խօսքը գետին գցել:

ՏԻԳ. Չէ... մինչև ազուս չթափեմ, ես չեմ հանդատանայ... (Սաստիկ զարացած, լինաբար եւ արագ անցնում է միւս սենեակը):

Ան Ի՞նչ պիտի անի, տեսնես: Չգնայ ու ճիշտ որ իր սասածն անի: Տաք բնութիւն է, բարկանում է, Աստուած ազատի... (Յանկարծ լուում է ապտակի բարձր ձայն եւ կանայի ձիչ. Մտնում է Տիգրանը՝ աչքերն արիւն կոխած եւ չարութիւնից ծամածոռւած դէմքով):

Ան. Տիգրան, ձեռքդ հօ դաճուեց խեղճ աղջկայ երեսին...:

ՏԻԳ. Այն դեռ քիչ էր, դեռ քիչ էր նրան...

(Տիգրանը գազանի պէս մրմռալով՝ անց ու դարձ է անուամ: Յանկարծ լուում է ատրճանակի պայթիւն: Տիգրանը քարացած կանգ է առնում: Սարսափած ներս է վազում Վարդուշը, քիչ յետոյ Սամսոնը):

Տ Ե Ս Ի Լ 17.

Աննա, Տիգրան, Վարդուշ, քիչ յետոյ Սամսոն:

ՎԱՐԴ. Շուտ հասէք... Տիգրանի ատրճանակով... Հրանոյշը... Հրանոյշը...

Ան. (Գլխին տալով) Վայ, հոգը իմ գլխին... (Շտապ գնում է նոյնպէս Վարդուշը: Վշտահար մտնում է Սամսոնը):

ՍԱՄՍ. Բժիշկ, բժիշկ... (Վաղիվաղ դուրս է գնում):

ՏԻԳ. Ախ, Հրանոյշ... (Անցնում է միւս սենեակը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը մտում է անփոփոխ: Երկրորդ գործողութիւնից յետոյ մինչև  
չբերորդը անցել է մօտ երկու ամիս ժամանակամիջոց: Ժամանակը կէսօր:

Տ Ե Ս Ի Լ 1

Սամսոն, Վարդուշ. (երկուսն էլ դրսի շորով)

ՍՍՄՄ. Վարդուշ, քիչ առաջ այն ի՞նչ նամակ ուղարկեց  
Հրանոյշը...

ՎԱՐԴ. Նամակ: Ես ոչինչ չեմ իմացել:

ՍՍՄՄ. Հապա: Մի ծրարած նամակ: Տուեց Ալեքսանին,  
թէ տանք, բայց ո՞ւր—չլսեցի:

ՎԱՐԴ. (ժպտալով) Կարելի է, մէկի վրայ սիրահարուել է:

ՍՍՄՄ. Ով գիտէ: Կարող է պատահել: Հիւանդութիւնից  
յետոյ այնքան է փոխուել Հրանոյշը, որ կարծես մի 16 տարե-  
կան ուրախ և աշխոյժ աղջիկ է դառել: Ա՛, լսում ես—երգում  
է... Անպիտանի ձայնն էլ լաւացել է:

ՎԱՐԴ. Ես Ալեքսանից պիտի հարցնեմ:

ՍՍՄՄ. Դու պատրաստ ես, չէ: Ուրեմն գնանք կոնցերտի  
համար տոմսակներ վերցնենք:

ՎԱՐԴ. Իհարկէ, կառքով:

ՍՍՄՄ. Ո՛չ, հօ թատրօն չենք գնում: Այստեղ մեզ մօտ  
խանութում վաճարում են տոմսակները:

ՎԱՐԴ. Քանի հատ պիտի վերցնես:

ՍՍՄՄ. Երեքը, ինձ, քեզ և Հրանոյշին:

ՎԱՐԴ. Կարելի է, Հրանոյշը չի գալիս:

ՍՍՄՄ. Կը հարցնենք:

ՎԱՐԴ. (դռնից) Հրանոյշ, այս երեկոյ դու կոնցերտ չե՞ս  
գնալու: (մտնում է Հրանոյշը)

Տ Ե Ս Ի Լ 2.

Սամսոն, Հրանոյշ, Վարդուշ.

ՀՐ. Ի՞նչ ասացիր, Վարդուշ:

ՍՍՄՄ. Այս երեկոյ լաւ կոնցերտ կայ: Մինք գնում ենք:  
Քեզ համար էլ տոմսակ վերցնեմ, չէ, Հրանոյշ:

ՀՐ. Ես... չգիտեմ, ճշմարիտ, գամ թէ ոչ:

ՍՍՄՄ. Իհարկէ:

ՎԱՐԴ. Ի՞նչ պիտի շինես տանը:

ՀՐ. Լաւ, վերցրէք:

ՍՍՄՄ. Կ'ուզես, արի սիասին գնանք, հա՛:

ՀՐ. Ո՛չ, ես չեմ կարող: Ես սպասում եմ մէկին:

ՍՍՄՄ. Այդ ո՞ւր եք սպասում, օրիորդ:

ՀՐ. (ձպտալով) Կը գայ, կ'իմանաք:

ՍՍՄՄ. Ա՛խ, դու... ծածուկ, ծածուկ բաներ ես անում...

Զլինի՞, սիրահարուել ես:

ՀՐ. Այո՛, թո՛ւնդ:

ՍՍՄՄ. Ո՞ւր վրայ, թոյլ տուէք հարցնել:

ՀՐ. Յետոյ կ'իմանաք:

ՍՍՄՄ. Օ՛յ-օյ-օյ... Այս ի՞նչ գաղանփքներ են...

ՎԱՐԴ. Դէ գնանք, գնանք, Սամսոն: Տոմսակները կը  
սպասուին, մենք կը մնանք առանց տոմսակի:

ՍՍՄՄ. Գիտէք ինչ, ասում եմ ուղղակի մի օթեակ վերց-

նեմ:

ՎԱՐԴ. Ի՞նչ լաւ կ'անես... Օթեակում փառաւոր կը բաղ-  
մենք ու...

ՀՐ. Ոչ, օթեակը թանկ է:

ՍՍՄՄ. Զանազանութիւնը չնչին է:

ՀՐ. Բայց և այնպէս, ի՞նչ հարկաւոր է:

ՎԱՐԴ. Ո՛չ, ինչո՞ւ, ափսոս չէ՞ օթեակը...

ՍՍՄՄ. Իհարկէ: Թղթախաղում տարած փող է—թող  
գնայ, օթեակ կը վերցնեմ: Գնանք, Վարդուշ:

ՎԱՐԴ. Շի՛կ... (Սամսոնը եւ Վարդուշը գնում են):

ՀՐ. Ա՛խ, Վարդուշ, որքան միամիտն ես դու... (Մտնում է  
Ալեքսանը):

Տ Ե Ս Ի Լ 3.

Հրանոյշ, Ալեքսան.

ՀՐ. Նամակը յանձնեցի՞ր Արամեանին:

Ա. Այո՛:

ՀՐ. Ի՞նչ ասաց:

Ա. Էս ըողէիս կը գայ:

ՀՐ. Շատ լաւ: Դու գնա՛ բանիդ: (Ալեքսանը գնում է):



լինի, միայն թէ ապրել... Միայն թէ շնչել, տեսնել, զգալ և մտածել...

Ա.Ր. Այժմ ես ձեզ լաւ հասկացայ:

Հ.Ր. Եթէ ես, կազդուրուելուց յետոյ, մնայի նոյնը, ինչ որ առաջ էի.— մի թոյլ, երերուն, անվճռական արարած,— այն ժամանակ աւելի լաւ էր, որ ես իսպառ ոչնչանայի... որովհետեւ, իսկապէս ինչ էի դրանից առաջ— մի աւելորդ իր, որ գուր տեղ է բռնում աշխարհում, մի խեղճ էակ, առանց սեփական կաճքի, նախապաշարժունքով կաշկանդուած, անընդունակ մի համարձակ քայլ անելու, որը դուրս է առօրեայ կեանքի հասկացողութեանց շրջանակից:

Ա.Ր. Ահա ուրեմն ինչի համար էք ուրախ:

Հ.Ր. Ես ուրախ եմ մանաւանդ նրա համար, որ այժմ գիտեմ, թէ ինչպէս պէտք է ապրել: Ես գտայ իմ կեանքի ճանապարհը: Ես այժմ կամենում եմ և կարող եմ ապրել մի նոր, գիտակցական և աշխատաւոր կեանքով:

Ա.Ր. Այդ շատ և շատ ուրախալի է, օրիորդ: Եւ, իսկապէս, մեծ փոխութիւն եմ նկատում ձեզ վրայ: Դուք այժմ աւելի նիհարել, գունատուել էք, բայց դրա փոխարէն, մի այնպիսի զարմանալի փայլ են ստացել ձեր աչքերը, որ առաջ չկար... Ձեր հայեացքի մէջ ես այժմ տեսնում եմ մի տեսակ առողջ կենսութիւն, մի ինչ որ առնական վճռականութիւն:

Հ.Ր. Այդ ճիշտ է: Այն, ինչ որ առաջ ես չէի համարձակուում մտքովս անգամ անցկացնել, այժմ վճռուած է վերջնականապէս, և հէնց այդ նպատակով էլ ձեզ խնդրեցի ինձ մօտ:

Ա.Ր. Բանը ինչպէս է, օրիորդ:

Հ.Ր. Ես ձեզ այս բոպէիս կը բացատրեմ:

Ա.Ր. Ուշադրութիւնս լարած՝ լսում եմ, օրիորդ:

Հ.Ր. (Գժուարանալով) Գիտէք ինչ, պարոն Արամեան... Ես... մի... առաջարկութիւն... կամ աւելի ճիշտ... մի խնդիրք ունեմ...

Ա.Ր. Խնդիրք:

Հ.Ր. Այո, մի խնդիրք: Գիտէք... ես վճռել եմ նուիրուել բեմին...

Ա.Ր. (Չարմայած) Նուիրուել բեմին:

Հ.Ր. Այո: Ձեզ էլ յայտնի է, պարոն Արամեան, թէ ես ինչպէս եմ սիրում թատրոնը... Թատրոնը ես համարում եմ մի շատ բարձր և վեհ հաստատութիւն... դա հոգու կրթարան է, որտեղ իսկապէս որ գտում, մաքրում են մեր զգացմունքները, և մենք սովորում ենք սիրել գեղեցիկը և առաքինին և ատել

առեղը և արատը: Ես միշտ երանի եմ տուել նրանց, որոնք ամեն բան ձգել են և նուիրուել այդ պաշտելի հաստատութեան: Ահա ինչու ես վճռեցի նոյնպէս թողնել ամեն ինչ և, գնալ իմ սիրած աստուածութեան ետևից:

Ա.Ր. Օրիորդ, ես ապշած եմ:

Հ.Ր. Ի՞նչու:

Ա.Ր. Դուք դժուարանում էիք մասնակցելու մինչև անգամ սիրողների մէկ ներկայացմանը, և այժմ... յանկարծ...

Հ.Ր. Ո՛չ, իմ վճիռը յանկարծակի չէ եղած. մինչև այդ ես շատ մտառանջուել եմ և ինքս իմ դէմ վաքառել... (Վայրկենական լռութիւն) Բայց դուք լուռ էք և ոչինչ չէք ասում:

Ա.Ր. Օրիորդ, թոյլ տուէք հարցնել, արդեօք դուք լաւ մտածել էք ձեր անելիք քայլի մասին:

Հ.Ր. Այո, մտածել եմ... (կասկածով) բայց դուք մի տեսակ էք... դուք ինձ խորհուրդ չէք տալիս...

Ա.Ր. Այսինքն, ոչ թէ խորհուրդ չեմ տալիս, այլ... այլ...

Հ.Ր. (Վշտայած) Պարոն Արամեան, ինդրում եմ անկեղծ եղէք ինձ հետ...

Ա.Ր. Ես ձեզ հետ անկեղծ չեմ:

Հ.Ր. Ես կամենում եմ ասել, որ պարզ խօսէք ինձ հետ, չքաշուէք ոչ մի բանից, ասացէք այն, ինչ որ մտածում էք: Ես կարծում էի, թէ ձեզ կ'ուրախացնեմ իմ այս վճիռն յայտնելով, այն ինչ դուք... այնպէս սառը վերաբերուեցիք...

Ա.Ր. Հաւատացէք, օրիորդ, որ ես...

Հ.Ր. Գուցէ դուք ինձ համարում էք անընդունակ, դուրկ բեմական ձիրքից, գուցէ ես մոլորուած եմ միայն... Այն ժամանակ ուրեմն... ներեցէք, եր ես...

Ա.Ր. Օրիորդ, ես ինչպէս կարող եմ այդպէս մտածել, երբ ես ինքս ձեր գնահատողներից մէկն եմ և քանիցս անգամ բացարձակ յայտնել եմ իմ կարծիքը ձեր մասին: Ե՛ս չէի, որ ասում էի, թէ բաւական է ձեզ մի քանի տարի փորձուել բեմի վրայ, և դուք կը գառնաք առաջնակարգ դերասանուհի... Ուրեմն այժմ ես ինչպէս կարող եմ ձեզ համարել անընդունակ: Մի թէ դուք կարծում էք, որ ես այն ժամանակ միայն շողորթութիւն էի անում:

Հ.Ր. Ո՛չ, ներեցէք, ես այդ չեմ կամենում ասել: Ես միայն զարմանում եմ, որ դուք մի տեսակ անտարբերութեամբ վերաբերուեցիք դէպի իմ դիտաւորութիւնը:

Ա.Ր. Օրիորդ, ուղիղն ասած, ես մի կողմից ուրախ եմ ձեր վճռի համար, միւս կողմից— վարանում եմ ձեզ խորհուրդ տալ:

ՀՐ. Ի՞նչու:

ԱՐ. Անա թէ ինչու: Մեզանում բեմական ասպարէզը որքան էլ հրապուրիչ կողմեր ունենայ, քանի որ նա մեզ տալիս է, երկար տարիներից յետոյ, փառք և անուն և նոյն իսկ փոքրիկ ապահովութիւն, այնուամենայնիւ ծածկուած է փուշու տատակով: Արդեօք ձեզ յայտնի է մեր անդրկուլթսեան կեանքը... Ճանաչում էք արդեօք այն մթնոլորտը, որի օդը պիպի շնչէր... Գիտե՞ք դուք, թէ որքան թանկ է նստում մեզ մեր իւրաքանչիւր քայլը դէպի առաջ... Կ'ունենամք արդեօք այնքան ոյժ և կարողութիւն, որ դիմանաք այն բոլոր բանասարկութիւններին, չար նախանձին, չկամութեան, որոնք անպակաս են գեղարուեստի աշխարհում...

ՀՐ. Իմ կարծիքով, գեղարուեստը բարձր է բոլոր բանասարկութիւններից, և չար նախանձից, և մարդկային չկամութիւնից:

ԱՐ. Ենթադրենք մի բոպէ, որ դուք կարողացաք բարձր մնալ այդ բոբորից, Բայց կայ և ուրիշ հանգամանք: Դա ազահովութեան անիծեալ հարցն է: Մենք, դերասաններս, անապահով ենք, մանաւանդ, երբ դեռ ոչ մի անուն չունենք և, այս պէս ասած մեր ոտը դեռ չենք հաստատել բեմի վրայ: Մենք միշտ և միշտ ենթակայ ենք ամեն տեսակ պատահարների: Զրկանքը, նեղութիւնները մեր անբաժան ուղեկցներն են, որոնք, սերուակամների պէս, հեռուում են մեզ ամեն տեղ...

ՀՐ. Բայց դուք ո՞ւր տանում էք այդ բոլոր նեղութիւնները, ես էլ կը ասանեմ, ես էլ կ'ունենամ այդքան քաջութիւն:

ԱՐ. Օրիորդ, դուք, ճշմարիտ, ինձ զինաթափ էք անում ձեր զարմանալի մտածանութեամբ: Եթէ այդպէս է, համեցէք —եկէք ասպարէզ: Ես ձեզ ի բոլոր սրտէ շնորհաւորում եմ ձեր այդ համարձակ քայլի համար:

ՀՐ. Ուրեմն—ինձ ընդունում էք...

ԱՐ. Ամենայն ուրախութեամբ:

ՀՐ. Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ:

ԱՐ. Ամեն բոպէ, երբ կամենաք: Մենք պատրաստ ենք:

ՀՐ. Կրկին շնորհակալութիւն: Ի՞նչքան ուրախ եմ ես:

ԱՐ. Բայց մի բան պէտք է ասեմ, ձեզ, օրիորդ: Մենք արդէն վերջացրել ենք մեր այստեղի ներկայացումները: Այժմ պիտի գնանք գաւառները: «Աղէ ուրեմն, թափառականդ Ագաթէր»...

ՀՐ. Ես էլ կը գամ ձեզ հետ...

ԱՐ. Մենք վաղն և եթ գնում ենք:

ՀՐ. Պատրաստ եմ և ես:

ԱՐ. Հանտան խօսք:

ՀՐ. Այո:

ԱՐ. Հնա, իսկ ձերոնք, ձեր տանեցիք...

ՀՐ. Նրանք, իհարկէ, կը հակառակուեն:

ԱՐ. Եւ կարող են—անախորժութիւններ ծագել:

ՀՐ. Թո՛ղ ծագեն: Զուրն ընկնողը անձրևից չի վախենայ:

ԱՐ. Սակայն—այդ ձեր գործն է: Արէք, ինչպէս կ'ուզէք: Գալով մեզ, մենք ուրախ կը լինենք, որ մեր խմբի մէջ մի նոր և թարմ ոյժ կ'աւելանայ: Իսկ առ այժմ... (վեր է կենում):

ՀՐ. Մինչև գնալներս մենք կրկին կը տեսնուենք:

ԱՐ. Այո, այո: Իսկ դուք այդ միջոցին ձերոնց հետ խօսեցէք, նորից ծանր ու բարակ մտածեցէք ձեր անելիք քայլի մասին, որպէս զի յետոյ, ապագայում, չզղջաք:

ՀՐ. Երբէք:

ԱՐ. Տայ Աստուած, որ առիթ չունենանք զղջալու:

Adio:

ՀՐ. Յ'տեսութիւն:

(Արամեանը գնում է: Հրամայող ուրախ է, բայց միւսնոյն ժամանակ մտախոհ: Կարճատեւ լուսնից յետոյ):

Տ Ե Մ Ի Լ 6.

Հրանոյշ (մենակ)

Մյն, ինչ որ մի ժամանակ երազ էր թւում ինձ, այժմ դառնում է իրողութիւն: Կարծես, թեւորուել եմ ես, և ինձ մնում է միայն թափ տալ թևերս և բարձրանալ... (Մտախոհ) Բայց նա, ես նախատեսում եմ մի սարսափելի փոթորիկ, որ պիտի բարձրանայ իմ դէմ... դարձեալ սրանեղութիւն, որ պիտի բարձրանայ իմ դէմ... (կարճատեւ լուսնիւն, յետոյ աշխոյժ) Բայց դաւձալ նախատիք... (կարճատեւ լուսնիւն, յետոյ աշխոյժ) Բայց ոչինչ: Վերջին անգամ էլ կը լսեմ ես սրանց նախատիքը, ոչինչ: Վերջին անգամ էլ կը լսեմ ես սրանց նախատիքը, որին այնքան սովոր եմ, և այնուհետև—վերջ իմ տանջանքներին... Այսպէս ուրեմն վաղը մենք գնում ենք... Դէ՛հ, Միսյոն, յառանջ և յառանջ...

«Գիտե՛ս արդեօք այն աշխարհը, Ուր կ'իտրոնն է ծաղկում, Կանաչագեղ թաւուտի մէջ Ոսկի նարինջ վարվում...»

(Լսում է քեմի ետեւ Սամսոնի ձայնը):

Սամսոնը... Մի անգամ էլ մուրացկանի պէս, ձեռքս կը մեկնեմ եղբորս, և դա կը լինի վերջին անգամ:

(Մտնում են Սամսոնը և Վարդուշը: Վարդուշը առանց կանգ առնելու անցնում է միւս սենեակը, իսկ Սամսոնը մնում է):

Տ Ե Ս Ի Լ 7.

Հրանոյշ, Սամսոն,

ՍՍՄՍ. Տոմսակն արդէն վերցրինք: Աջակողմեան չոր- բորդ օթեակ:

ՀՏ. Սամսոն, ես քեզանից մի բան պիտի խնդրեմ:

ՍՍՄՍ. Խնդրիք երկուսը:

ՀՐ. Ինձ... փող է հարկաւոր:

ՍՍՄՍ. Շատ, թէ քիչ:

ՀՐ. (ձպտալով) Շատ:

ՍՍՄՍ. Հարիւր:

ՀՐ. Ո՛չ, այդ շատ է:

ՍՍՄՍ. Եօթանասուն, վաթսուներեք, ինչքան տամ, ես չգիտեմ:

ՀՐ. Եթէ կարողանաս յիսուն ըլլալի տալ, ես այնպէս շնորհակալ կը լինիմ քեզանից... մինչև մահս...

ՍՍՄՍ. Հրանոյշ, եթէ դու միշտ այդպէս պարզ լինես, այդպէս ուրախ, ես քեզանից, Աստուած է վկայ, ոչինչ, ոչինչ չեմ խնայի... (Համրելով դրամները) Բարեբախտաբար, ձոտս քո ուզածիցն էլ աւելի է: Կ'ուզես, բոլորը վերցրում:

ՀՐ. Ո՛չ, յիսունը լիովին բաւական է:

ՍՍՄՍ. Ահա առիկ: (Տալիս է) Բայց ի՞նչ պիտի անես, կարելի է հարցնել:

ՀՐ. Մի քանի բաներ պիտի անես ինձ համար և մի լաւ ընծայ բժշկին, որ ինձ կենդանացրեց:

ՍՍՄՍ. Կեցցես, լաւ բան ես մտածել: Բայց քեզ համար ինչ պիտի անես, օրինակ: Երևի, նոր գլխաւոր:

ՀՐ. Ա՛յ հիմա կ'անեմ, կը բերեմ տուն—կը տեսնես:

ՍՍՄՍ. Դարձեալ գաղանիքներ... Է՛հ, շատ լաւ, շատ գեղեցիկ: Գնա և առ, ինչ սիրտդ կը տայ:

ՀՐ. Ես իսկոյն կը վերադառնամ: (Գլխարկը ծածկելով, գնում է: Գրան մօտից ասում է խորհրդարար) Շուտով ամեն բան կ'իմանար: (Հեռանում է):

ՍՍՄՍ. Այս ի՞նչ հանելուկներ են, Տէր Աստուած:

(Մտնում են Աննա և Վարդուշ):

Տ Ե Ս Ի Լ 8.

Աննա, Սամսոն, Վարդուշ:

ԱՆ. Սամսոն, ո՞ւր գնաց Հրանոյշը:

ՍՍՄՍ. Խանութ: Բժշկի համար ուզում է մի լաւ ընծայ

առնել:

ԱՆ. Իբր թէ նրան քիչ փող ենք տուել...

ՍՍՄՍ. Երկու հարիւր մանէթը շատ է: Նա մահից փրկ-

կեց Հրանոյշին:

ԱՆ. Դ՞ու նրան փող տուիր:

ՍՍՄՍ. Այո, յիսուն ըլլալի:

ՎԱՐԴ. Յիսուն ըլլալի... Յիսուն ըլլալի անոց ընծայ...

ՍՍՄՍ. Ասենք, իր համար էլ բաներ պիտի առնի:

ԱՆ. Որդիս, Էղբան փող կը տան աղջկայ ձեռքը:

ՍՍՄՍ. Գիտես ինչ, Մայրիկ: Այն դէպքից յետոյ ես

Հրանոյշին այնպէս եմ խղճում և սկսել եմ այնպէս սիրել, որ, եթէ բոլոր ունեցած փողերս էլ ուզի, կը տամ: Աստուած վը- կայ, ես նրան չեմ կարող մերժել: Մանաւանդ հիմա այնպէս է, որ առաջուայ Հրանոյշին դժուար է ճանաչել...

ՎԱՐԴ. Ճիշտ որ, շատ զարմանալի է: Առաջ ինչքան տը-

խուր էր, չխօսկան, շարունակ մտածումների մէջ, կարծես աշ- խարհի հոգսը նրան էին տուել—իսկ հիմա ամբողջ օրը բլբլ- լում է, կամ երգում, կամ հանաքներ է անում...

ԱՆ. Երբեք կը լինի: Հիմի ինքն էլ է փոշմանել իր ա- րածից: Էն ցաւերը, որ նա քաշեց, էն վոյվոյցը, որ գիշեր ցերեկ չէր կտրուում, նրան չէ, նրանից էլ վատթարին խելքի կը բերէին ու սիրել կը տային կիսնքը...

ՎԱՐԴ. Ասենք, մայրիկ, գիտե՞ք, հիմա դուք էլ նրա հետ

շատ լաւ էք վարուում: Այդ էլ մեծ նշանակութիւն ունի: Առաջ ի՞նչպէս էիք վարուում նրա հետ միևնոյնն էր...

ԱՆ. Դու որ քեզ մէջտեղ չես խառնում...

ՎԱՐԴ. Իհարկէ: Ես ս՞ուտ եմ ասում, չէ: Ամեն կողմից

կարիճի պէս խայթում էիք—դու մի կողմից, Տիգրանը միւս կողմից...

ՍՍՄՍ. Ի՞նչ ես...

ՎԱՐԴ. Դու էլ պակաս չես:

ՍՍՄՍ. Իսկ դ՞ու... Մոռացել ես ձեր ամեն օրուայ կռի- ները... Այն ի՞նչ բան էր... կատունների պէս քիչ էր քնում ի- րար երես ճպղկորէիք... Եւ այն էլ ինչ յիմար, դատարկ պատ-

ճառներից... Բոյրերը այդպէս են լինում, ինչպէս դուք էիք:

ՎԱՐԴ. Իսկ եղբայրները այդպէս են լինում, ինչպէս դուք էք:

ԱՆ. Լաւ, լաւ, տեսնեմ, կարող էք, էլի սկսեցէք: (Մտնում է Տիգրանը):

Տ Ե Ս Ի Լ 9.

Տիգրան, Աննա, Սամսոն, Վարդուշ.

ՎԱՐԴ. Տիգրան, Հրանոյշին չտեսար:

ՏԻԳ. (Անհանգիստ) Հ'ը ի՞նչ է պատահել... Ո՞ւր է գնացել...

ԱՆ. Խեղճ տղին ինչպէս վախեցրեց... Ը՛հ, սո, է: Ինչի՞ համար էնպէս վրայ պրծած հարցրիք (ծաղրելով) «Տիգրան, Հրանոյշին չտեսար». Հա, տեսաւ, ի՞նչ պիտի անես, ինչի՞ համար հարցրիք:

ՏԻԳ. (Երկմիտ) Տէր Աստուած...

ՎԱՐԴ. Այստեղ ի՞նչ վախենալու բան կար որ...

ՏԻԳ. Ես ի՞նչ իմանամ: Մի անգամ սիրտս ան է ընկել, կարծեցի, թէ էլի մի բան է պատահել... Հրանոյշը ո՞ւր է, որ ասում էք. «չտեսար»:

ԱՆ. Խանութ է գնացել, խանութ, բան անելու: Ը՛հ, Տիգրան: Դու էլ որ ամեն դատարկ բանի համար չես վախենում... Աղջիկ է, փող է վերցրել, գնացել բազար...

ՏԻԳ. (Սամսոնին) Դ՞ու տուիք, Սամսոն:

ՍԱՄՍ. Այո, յիսուն մանէթ:

ՏԻԳ. Յիսոն մանէթ... Ի՞նչ էր անում նա այնքան փող: Յետոյ, մենակ գնաց:

ՍԱՄՍ. Այո, բոլորովին մենակ: Ի՞նչ կայ որ...

ՏԻԳ. Մայրիկ, ես քեզ քանի անգամ ասել եմ, որ նրան մենակ չթողնէք դուրս գայ... Այսօր ատրճանակ է բռնում իր վրայ, վաղը իրան ծովը կը ձգի... Նա ամեն բանի ընդունակ է... նա իսթալու աղջիկ է:

ԱՆ. Չէ, Տիգրան, Հրանոյշը էլ էղպէս բան չի անի: Է՛նպէս է փոշմանել, որ... Մաքոֆը էլ չի անցկացնի... Հիմի նա ինձանից ու քեզանից էլ շատ է դողում իր կեանքի վրայ:

ՍԱՄՍ. Իհարկէ, նա խրատուեց, ես հիմա հանգիստ եմ այդ կողմից:

ՎԱՐԴ. Ես էլ շատ հանգիստ եմ:

ՏԻԳ. Այնուամենայնիւ պէտք է զգոյշ լինել և աչքից չտալ... պէտք է հետեւել նրան, ինչպէս երեխայի...

ՎԱՐԴ. Երեխայի... Ապա մի իրան էլ հարցրո՞ւ: Նա հիմա ասում է. «Ես տղամարդ եմ, տղամարդ»...

ՏԻԳ. Նա խորամանկն է: Այդպէս է ասում, որ իրան բարձեթող անենք... Թէ նա աղուէս է, ես նրանից աւելի աղուէս եմ... Չէ, ես անհանգիստ եմ... Պէտք է գնալ նրա ետեւից... (կամենում է դնալ):

ՍԱՄՍ. Դէ հերիք է, դու էլ... Ի՞նչ կասկածոտն ես դուստր:

ՏԻԳ. Վարդուշ, ես քեզ վրայ դարձանում եմ: Ուրիշ ժամանակ դու գլուխ կը ջարդես խանութ գնալու համար, ի՞նչու նրա հետ դուրս չեկար:

ՎԱՐԴ. Ինձ ո՞վ բան ասաց: Գլխարկը վերցնելն ու անհետանալը մէկ եղաւ:

ՍԱՄՍ. Դէ լաւ, կուի մի արէք: Ահա հէնց ինքը Հրանոյշը:

ՎԱՐԴ. (Վաղելով դրան մօտ) Նա է, նա է:

ԱՆ. (Որ նոյնպէս մօտեցել էր) Էս ի՞նչ է քաշ տալիս Ալեքսանը: (Մտնում է Հրանոյշը, յետոյ Ալեքսանը, որը չեմոզանք դնելով դրան մօտ յատակի վրայ, հեռանում է: Բոլորն աչքած իրար երեսին են նայում եւ զարմանքից կարծես քարացել են: Վարկիկնական լուծիւն:)

Տ Ե Ս Ի Լ 10.

Աննա, Տիգրան, Սամսոն, Հրանոյշ, Վարդուշ:

ՍԱՄՍ. Հրանոյշ, այս ի՞նչ ճանապարհորդական պատրաստութիւններ են:

ՀՐ. Վաղը—ես գնում եմ:

ՍԱՄՍ. Այդ ո՞ւր, Աստուած յաջողի:

ՀՐ. Գաւառները:

ՏԻԳ. Բարբ ճանապարհ:

ՎԱՐԴ. Մայրիկ, ինչեր է խօսում:

ԱՆ. Ես բան հասկանում եմ, որ քեզ ասեմ:

ՍԱՄՍ. Բայց ի՞նչ նպատակով, ո՞ւմ հետ:

ՀՐ. Դերասանական խմբի հետ, ներկայացումներ տալու:

ՏԻԳ. Ա՛...:

ՍԱՄՍ. Դերասանական խմբի՞ հետ:

ԱՆ. Աղջիկ, երանգ ես տեսել:

ՎԱՐԴ. (Մի կողմ) Խելագարուել է, ի՞նչ է:

ՍԱՄՍ. Հրանճյշ, բացատիր, խնդրեմ, ինչո՞ւմն է բանը: Մենք ոչինչ չենք հասկանում քո խօսքերից: Ի՞նչպէս թէ «վաղը գնում ենք... դերասանական խմբի հետ... ներկայացումներ տալու»... Չլինի՞ դերասանուհի ես կամենում դառնալ:

ՀՐ. Այո, արդէն վճռուած է:

ՏԻԳ. Հըմ...

ԱՆ. Պակասը գրատուում է... էլ ի՞նչ դարդ...

ՎԱՐԴ. Տեսնես, յանկարծ ի՞նչ փչեց խելքին:

ՍԱՄՍ. Է՛հ, յետո՞յ: Հիմա դու կատակ չես անում:

ՀՐ. Ամենակին:

ՏԻԳ. Բայց ինչո՞ւ, ասան, խնդրեմ, դու ցանկանում ես մեզանից հեռանալ: Մենք քեզ քաղցած ու ծարաւ ենք թողնում:

ՀՐ. Ընդհակառակը, մինչև կեանքիս վերջը ես չեմ մոռանայ ձեր երախտիքը, դուք ինձ կերակրել էք:

ՏԻԳ. Գուցէ քեզ շորերի՞ց ենք զուրկ պահել:

ՀՐ. Բոլորովին: Երբ մտածում եմ, թէ որքան փողեր էք ծախսել իմ հանդերձեղէնի վրայ, ես ինքս ինձնից ամաչում եմ:

ՏԻԳ. Ուրեմն... էլ ի՞նչ պատճառ ունիս զժգո՞հ լինելու մեզանից:

ՀՐ. Ես զժգո՞հ չեմ ձեզանից: Ես կամենում եմ միայն—բարոյապէս անկախ լինել ձեզանից:

ՏԻԳ. (նկմարար) Բարոյապէս... անկախ...

ՀՐ. Ես կամենում եմ նոյնպէս բաց անել ձեր բախտի ճանապարհը, որ փակուած է իմ շնորհիւ:

ՍԱՄՍ. Դու հանելուկներով ես խօսում, Հրանճյշ: Աստուած սիրես, պարզ խօսիր:

ՏԻԳ. Հասկանում ես մայրիկ, թէ ո՞ւմ կտուրն է քար գցում:

ԱՆ. Ինձ բան մի հարց էք... Ես գլուխս կորցրել եմ:

ՀՐ. Դուք ցանկանում էք ապրել ձեր ուղածի պէս, իսկ ես խանգարում եմ: Ես կը հեռանամ, դուք կ'ազատուէք մի ծանրութիւնից և այն ժամանակ կ'ապրէք ձեր ուղածի պէս:

ՍԱՄՍ. Գլուխս մեռնի, թէ բան հասկանամ սրանցից... Ո՞վ ասաց, որ դու ծանրութիւն ես մեզ համար... Ո՞վ ասաց, որ դու փակել ես մեր բախտի ճանապարհը... Սա ինչէ՞ր է խօսում... Ինչէ՞ր է երևակայում... Դու օտար ես, ինչ է, այս տանը... դու խօսիր ես... դու մեր հարազատ քոյրը չես...

ԱՆ. Ա՛յ թէ որտեղ է ասուած. օձի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանայ: Մեր բարկացած ժամանակ մի

բան ենք ասել, հիմի էլ չի ուզում մոռանալ, ճար չկայ:

ՀՐ. Տէր Աստուած, ես հօ ձեզ չեմ մեղադրում: Ինչ որ ասել էք, դուք իրաւունք ունէիք ասելու: Ինչո՞ւ դուք պէտք է չարչարուէք, քրտինք թափէք, իսկ ես պարապ նստեմ, մատ մատի չտամ և վայելեմ ձեր աշխատանքի պտուղները... Ո՞ւր է քո չտամ և վայելեմ ձեր աշխատանքի պտուղները... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, մինչ է այստեղ արդարութիւնը... Ես հօ չեմ կարող, ճշմարիտ, մինչ է վերջ, երեխայի պէս, փնալ ձեր խնամակալութեան տակ և ձրիակերի դեր կատարել: Ես չեմ կարող մինչև վերջ, ամեն մի դատարկ բանի համար, ձեռքս մեկնել ձեր առաջ և... ողորմութիւն խնդրել:

ՏԻԳ. Դա—ողորմութիւն չէ:

ՍԱՄՍ. Դա մեր եղբայրական պարտականութիւնն է:

ՀՐ. Ո՛չ, արդէն բաւական է: Ես արդէն վաղուց է չափահաս աղջիկ եմ: Իմ ինքնասիրութիւնը, իմ արժանապատուութեան զգացմունքը և, վերջապէս, իմ խիղճը բողբոջում են դրա դէմ: Ժամանակ է, որ ես էլ իմ պատիւը ճանաչեմ և փոքր ինչ յարգեմ իմ անձը:

ՏԻԳ. Հրանճյշ, դու, երեի, մեզ փորձել ես ուզում:

ՀՐ. Աստուած չանի: Ի՞նչի համար:

ՏԻԳ. Իսկ եթէ դա լուրջ բան է, ուրեմն դու այդ միտքը

զլխիցդ կը հանես:

ՍԱՄՍ. Ես ոչ մի կերպ չեմ կարող թոյլ տալ, որ իմ քոյրը գնայ և դերասաններ ի հետ գաւառներումը թրե՛ գայ... Դա ամենակին պատիւ չի բերի մեր ընտանիքին:

ՏԻԳ. Ի՞նչ պատիւ... Մեզ նման եղբայրների երեսին կը թքեն... Մենք կը խայտառակուենք բոլոր ընտանիքով... ծաղրու ծանակ կը շինեն մեր անունը... Իմ քոյրը—և թափառական դերասանուհի... Ես, Հրանճյշ...

ԱՆ. Լսում ես, Հրանճյշ...

ՀՐ. Տիգրան, դու մոռացել ես, ես քեզ կը յիշեցնեմ: Չէ որ դու ինքդ ասացիր ինձ, որ դու էլ մարդ ես, ունիս քո սեփական ցանկութիւնները և կամենում ես ապրել քո ուղածի պէս: Այժմ թոյլ տուր և ինձ ապրել իմ ուղածի պէս, որովհետեւ ես էլ քեզ նման Աստուած ստեղծած մի արարած եմ և ունիմ իմ սեփական ցանկութիւնները...

ՏԻԳ. Բայց մի մոռանար, որ դու կին ես, իսկ ես—տղա-

մարդ: Ձանազանութիւնը մեր մէջ, կարծեմ, շատ մեծ է: ՀՐ. Տէր Աստուած, ախր այն ո՞վ է անխել կնոջը, որ նա չունենայ իր սեփական ցանկութիւնները, իր սեփական աշխատանքը և իր կեանքը անցկացնի միայն զուարճութիւնների և դատարկութեան մէջ... Ո՛չ, հազար անգամ ո՛չ... Աշխատանքը օրհնութիւն է նաև կնոջ համար:

ՏԻՓ. Գիտե՞ս ինչ կայ, Հրանտյշ: Լաւ լսիր ինձ: Երբ աղջիկը բոլորովին որբ և անտէր է, հն, այն ժամանակ ոչինչ չունիմ դրա դէմ. նա գնում է ուրիշների համար կար է անում, լուացը է անում, քոծութիւն է անում, մինչև անգամ իր ոտը վատ ճանապարհի վրայ է դնում—ի՛նչ արած—ապրել է պէտք: Բայց երբ ծնողները կենդանի են կամ ջուրիտ ջուրիտ եղբայր-ները կողքին կանգնած, այն ժամանակ աղջկան էլ ի՛նչ կը վայելի փնալիբը թէ աշխատանքի ետևից... Դա ոչ թէ կանանց, այլ տղամարդկանց գործն է: Աղջիկը երբ հասաւ, պէտք է մտածէ իր մարդու գնալու մասին, իսկ երբ մարդու գնաց՝ իր տունը պիտի կառավարի և իր երեխաներին մայրութիւն անի: Սրանք են կնոջ բոլոր պարտականութիւնները: Ուրիշ ոչինչ էս չեմ ընդունում:

ՍԱՄՍ. Իհարկէ, իհարկէ: Կինը իր ամուսնու, տան պահպանն է, օջախի պահպանը—և ուրիշ ոչինչ:

ՀՐ. Ես բոլոր էութեամբս դրա դէմ եմ... Ամուսին, ամուսին... Սիրող, լաւ ամուսիններ—այո՛, էս այդ հասկանում եմ... Բայց վատ, կռուարար, անբարոյական ամուսիններ—ահա ինչն է զզուելի... Ես իմ մաքուր աշխատանքով ձեռք բերած մի կտոր հացը չեմ փոխի այդ տեսակ վատ ամուսնութեան բոլոր զուարճութիւնների հետ... (Պառկա):

ՏԻՓ. Ուրեմն... թողնե՛ք, որ գնաս... Ուրեմն—մենք չը կանք քեզ համար... Դու մեզ ոչ մի բանի տեղ չես դնում:

ՀՐ. Ի՞նչի համար էս այդ ասում... Աւելի լաւ չէ՞, որ մենք սիրով և հաշտութեամբ բաժանուենք... Եւ վերջապէս էս հօ ձեզանից ընդմիշտ չեմ հրաժարուում... Որտեղ էլ լինեմ, ուր որ էլ գնամ, էս միշտ ձեռ կարօտը պիտի քաշեմ... Միշտ նամակներով կը խօսեմ ձեզ հետ, տեղեկութիւններ կը տամ իմ մասին... Խնդրում, ազաչում եմ, դուք էլ ինձ չմոռանաք... (Զգացում, համարեա լալազին) Որքան էլ վշտացրած լինեմ ձեզ, էս... այնուամենայնիւ... ձերն եմ... ձեր հարազատը...

ԱՆ. Ա՛խ, Աստուած ջան, ո՞ր մեղքերիս համար էս ինձ պատժում:

ՍԱՄՍ. Ա՛խ, Հրանտյշ, դու այս ինչեր էս անում...

ՏԻՓ. Է՛հ, յետոյ... Իսկ ի՞նչ կը լինի դրա վերջը, դու այդ մտածել էս:

ՀՐ. Վերջը, Աստուծով, շատ լաւ կը լինի: Ես անուն և դիրք կը վատտակեմ...

ՏԻՓ. Կարելի է: Բայց գիտե՞ս, թէ ինչ գնով կը վատտակես անուն և դիրք... Գիտե՞ս, թէ ինչ տեսակ ցեխի մէջ կա-

րող էս ընկնել դու... Հասկանո՞ւմ էս արդեօք, թէ ո՞ւր կը տանի քեզ այն ճանապարհը, որ դու ընտրել էս...

ՀՐ. Իմ ընտրած ճանապարհը կը տանի ինձ դէպի փայտք և երջանկութիւն:

ՏԻՓ. (ընկելով) Ո՛չ, այդ ճանապարհը քեզ կը տանի... դէպի խայտառակութիւն... և անկում...

ՀՐ. (Յուզում) Բաւական է... պատիւը ճանաչիր... Ես... քո ասած կանանցից չեմ... Ես գնում եմ ազնիւ և մաքուր աշխատանքի... և ոչ թէ...

ՏԻՓ. (Ծաղրելով) Ազնիւ աշխատանքի... Ի՞նչ:

ՍԱՄՍ. Տիգրան, հանդարտուիր:—Քոյրս, դու էլ:

ԱՆ. Հրանտյշ, առաջ մօրդ թաղիր, յետոյ էդ բանն արա՛: (Լալիս է):

ՀՐ. Ա՛խ, դուր էք խօսում: Արդէն վճուում է:

ՎԱՐԴ. Հրանտյշ, մի՞թէ մայրիկին սես խնայում... մի սպանիր նրան...

ՏԻՓ. Եթէ դու այդ բանն անես, Հրանտյշ, էս քեզ կը համարեմ մեզ համար բոլորովին կորած: Գնա՛, եթէ կ'ուզես, կարող էս... համեցէք... (բաց է անում դուր) Ահա—դուք լայն բաց է քո առաջ... բայց լաւ իմացիր, որ այնուհետև դու այլ էս չպիտի համարձակուիս ոտդ դնել այս դրան շէմքին և մեր աչքին երևալ... Գնա՛, էս քեզ այլ էս չեմ խղճում: Գնա՛, թէ կուզ ջուրն ընկիր!

ՀՐ. Ներողութիւն: Այդպիսի յիմարութիւն էս այլ էս չեմ կրկնի երբէք, որովհետև էս այսուհետև կարող եմ ապրել իմ սեփական աշխատանքով! (Արդ անցնում է միւս սենեակը: Ամենքը վշտանար արձանացել են մտատանջ գիրքերի մէջ):

Վ Ե Ր Զ





«Ազգային գրադարան»



NL0350474

41970